17 ՅՈՒՆԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 111(4730)

Azg Վազ

ISSN: 1829-1651

Մեծ սպասումներ՝ հիմնականում Սարգսյանից եւ Ալիեւից

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները Կազանի հունիսի 25-ի հանդիպմանը որոշում կկայացնեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնադրույթների նախագծի առնչությամբ: Այս մասին, ըստ «ՌԻԱ-Նովոստի»-ի հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ **Ալեքսանդր Լուկաշեւիչը**:

«Սպասումները մեծ են», ասել է ռուս դիվանագետը: Նրա խոսքերով, ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, սպասվող հանդիպմանը ենթադրվում է քննարկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման այսպես կոչված հիմնարար սկզբունքների ամբողջական նախագիծ: Լուկաշեւիչը նշել է, որ այդ փաստաթղթի ձեւակերպումները համաձայնեցվել են ապրիլին եւ հունիսին Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումների ընթացքում:

Ռուս դիվանագետը ներկայացրել է, որ հենց այդ մշակումներն էլ կքննարկեն Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահները ու «կընդունեն համապատասխան որոշում»:

Կազանի հանդիպումը կլինի իններորդ եռակողմը Սերժ Սարգսյանի, Դմիտրի Մեդվեդեւի եւ Իլհամ Ալիեւի համար: Եվ եթե այդ նախորդած հանդիպումներում ստորագրված փաստաթղթերը հիմնականում կրկնությունն են արդեն իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների կամ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունների բովանդակության, ապա Կազանում սպասելիքներն ավելին են՝ ստորագրված տեսնելու որեւէ փաստաթուղթ, որը հիմք կդնի խաղաղ համաձայնագրի աշխատանքներին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ընդվզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դեմ

Ինչի՞ համար է ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Կազմակերպության կայքի համաձայն՝ նպատակը «խաղաղությանը նպաստող երկխոսության ծավալումն է հանուն «մարդկանց մտքերի խաղաղեցման», որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության գլխավոր թեմաներից մեկն է»:

Հենց այդ հաստատության ներսում, մեր վերջին դիտարկման համաձայն, ՅՈՒՆԵՍԿՕ-ն «ինչ-որ բան» է, որը ծառայում է սոսկ այն նպատակին, որ տեղավորի ուրիշ պաշտոններից զրկված մի քանի տնակյացների: Ի դեպ, 2005-ի դեկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ն գրեթե ոչինչ չարեց, երբ ադրբեջանցիները ոչնչացրին Ջուղայի (Նախիջեւան) հայրուրավոր խաչքարեր:

2011-ի հունիսի 15-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Միրոն» ցուցասրահում հայտարարված էր «Հայկական խաչքարերի արվեստը» ցուցահանդեսի բացումը Հայաստանի Հանրապետության մշակույթի փոխնախարարի եւ դեսպանի ներկայությամբ:

Բացումից ընդամենը մի քանի ժամ առաջ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությունը կազմակերպիչներից պահանջեց խաչքարերի լուսանկարների մակագրություններից հանել վայրերի նշումները, թողնելով միայն տարեթվերը: Պատկերացրեք խաչքարերի հայրուրավոր լուսանկարներ լոկ տարեթվերի նշումներով:

Չբավարարվելով հայկական մշակութային հիշողությունը մասամբ ջնջող այս մտավոր ահաբեկչությամբ (ինչպես որ 80 տարի շարունակ թուրքերն են պատմությունը խեղաթյուրում դասագրքերում), կազմակերպության անարգ ղեկավարները հանեցին նաեւ պատմական մեծ քարտեզը, որը ստույգ ցուցադրում էր տարբեր խաչքարերի գտնվելու վայրերը:

Վիրավորանքին ստորություն ավելացնելով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարության ներկայացուցիչները հրաժարվեցին ներկա գտնվել բացման արարողությանը եւ ելույթներին: Մի՞թե նրանք կկարողանային փարատել հայրուրավոր հրավիրյալների զայրույթը եւ այդ անբացատրելի իրավիճակի արդարացման պատճառներ գտնել:

Ըստ ՄԱԿ-ի բնորոշման, խաղաղության մշակույթը այն արժեքների, դիրքորոշումների, վարքագծերի եւ կենսակերպերի ամբողջությունն է, որոնք մերժում են բռնությունը եւ կանխում հակամարտությունները, դրանք արմատախիլ անելով անհատների, խմբերի եւ պետությունների երկխոսության ու բանակցության միջոցով: Սրանք ուրիշներին քարոզելուց առաջ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությունն ինքը պետք է կիրառի այդ արժեքները, դիրքորոշումներն ու վարքագծերը, ինչպես նաեւ խորհրդածի Ժ. Ֆեռոնի հետեւյալ ասույթի մասին. «Ստրկամտությամբ է, որ դառնում են անիծյալ հոգի»:

Ֆրանսահայության անունից հրապարակված այս հաղորդագրության վերջում կոչ է արվում հայերին իրենց զայրույթն արտահայտելու համար գրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարությանը.

էլ. փոստով՝ bpi@unesco.org

նամակով՝ UNESCO-7, place de Fontenoy

75352 Paris 07 SP France

Պ. Ք.

ՅՈՒՆԵՍԿՕ-ն ադրբեջանցիների ազդեցության տակ

Հունիսի 15-ին Հայաստանի մշակույթի փոխնախարարի եւ Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վիգեն Չիթեչյանի ներկայությամբ Փարիզի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնում բացված «Հայկական խաչքարերի արվեստը» լուսանկարչական ցուցահանդեսի ժամանակ ներկաները շփոթված նկատեցին, որ խաչքարերի մակագրություններում դուրս են թողնվել նրանց տեղանքի անվանումները: Նշված են եղել միայն տարեթվերը:

Ըստ լուրը հաղորդող ֆրանսահայ լրագրող Ժան Էսքիյանի, Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի հայկական կազմակերպությունները խստորեն դատապարտել են անարդարացի միջամտությունը եւ բողոքել մշակութային ժխտման այս արատավոր քայլի դեմ:

Էսքիյանը նաեւ հիշեցնում է, որ 2010-ի նոյեմբերին, երբ խաչքարերը դասվում էին մշակութային արժեքների շարքը, Ադրբեջանը բողոք էր ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ նշելով, որ «դրանք միայն հայկական չեն»:

Հ. Ծ.

Ի՞նչ է փոխվում «Ֆուկուշիմայից» հետո

Ո՞վ ավելի շատ շահեց ճապոնական «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի աղեւից: Այս բնավ էլ ոչ կոռեկտ հարցադրումն այնուամենայնիվ ունի իր կոնկրետ պատասխանը՝ Ռուսաստանը: Անցած ժամանակամիջոցում ռուսատանյան լրատվամիջոցների լուսանկարներում «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերը փայլատակում է ինքնագոհ ժպիտներով ու հրճվալից դեմքով: Ոչ, իհարկե, ծագող արեւի երկրի ողբերգությունը չէ նրա գոհունակության պատճառը, քավ լիցի, այլ դրա հետեւանքները համաշխարհային էներգետիկայի զարգացման միտումներում:

Երբ մի առիթով լրագրողները Վլ. Պուտինին հավաստեցին, որ նրա բախտը բերում է էներգակիրների գների բարձրացման հարցում, Վլադիմիր Վլադիմիրովիչը իրեն հատուկ իրոնիկ ժպիտով պատասխանեց, որ բախտը՝ բախտ, բայց իրենք թեւերը քշած աշխատել են, եւ որ հաջողությունը հաջողություն է բերում: Բայց այս օրերին, այդուհանդերձ, բախտի պարագան առաջնային է: Եվ բանը հենց «Ֆուկուշիման» չէ: Գերմանացիները որոշեցին մինչեւ 2021-ը փակել իրենց բոլոր ատոմակայանները: Շվեյցարիան որոշում ընդունեց այլեւս չկառուցել նոր ատոմակայաններ, իսկ գործող հինգը փակել մինչեւ 2034 թվականը: Իտալիան փակել է արդեն: Ատոմակայան ունեցող բոլոր պետությունները ծանր երկընտրանքի առաջ են կանգնել:

Բախտի մյուս անիվն էլ իրավիճակն է Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Աֆրիկայում, մասնավորապես Լիբիայում, երբ բարդացել է էներգակիրների արտահանումը Եվրոպա: Մինչդեռ եվրոպացի շատ փորձագետների կարծիքով, մայրցամքի համար էներգիայի հիմնական աղբյուրը կդառնա գազը, ինչի պաշարները Ռուսաստանում, փառք Աստծո, լիուլի են: Ատոմակայաններին կփոխարինեն գազաէլեկտրակայանները, գազաջահեստարանները մեծաքանակ մատակարարումների կարիք կունենան: Եվ չնայած Ռուսաստանը կարող մրցակիցներ ունի ի դեմս Նորվեգիայի, Նիդեռլանդների, Ալժիրի, Քաթարի եւ այլոց, Եվրոպան առաջին հերթին հայացքը հառում է Ռուսաստանին՝ «Գազպրոմին»: Համենայն դեպս, Գերմանիայում վերոհիշյալ որոշման ընդունմանն անմիջապես հաջորդեց այդ երկրի էկոնոմիկայի նախարարի խուճապահար այցը Մոսկվա:

Այսօր Եվրոպայի էներգահաշվեկշռում ատոմային էներգետիկան զբաղեցնում է 28 տոկոս, գազը՝ 23, վերականգնվող աղբյուրները՝ 13 տոկոս, մնացած 40 տոկոսը բաժին է ընկնում ածխաջրածիններին: Նկատի ունենանք, որ մայր ցամաքի երկրները ծրագրում են կամաց-կամաց հրաժարվել նաեւ նավթից: Առայժմ դժվար է հույս դնել նաեւ վերականգնվող աղբյուրների վրա. չափից դուրս թանկ են: Այնպես որ՝ կեցցե գազը:

Ինչպես հայտարարեց «Գազպրոմի» ղեկավար Միլլերը, անկախ ամեն ինչից, 2011-ին գազի արտահանումը անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավելացել է 25 մլրդ խմ-ով: Կանխատեսվում է, որ մինչեւ 2020 թվականը Եվրոպայի պահանջարկը, հատկապես նոր գազաէլեկտրակայանների գործարկումից հետո, կկազմի 380 մլրդ խմ, 2030-ին՝ 440: Չմոռանանք, որ հերթի է կանգնած նաեւ Չինաստանը, եւ երկու երկրների միջեւ ներկայումս բարդ բանակցություններ են տեղի ունենում գազի գնի համաձայնեցման շուրջը: «Ֆուկուշիմայի» վթարից հետո Վլ. Պուտինն իրեն թույլ տվեց օգնության «շռայլ» առաջարկություն անել Ճապոնիային:

Մի խոսքով, այսօր կարելի է լրջորեն խոսել համաշխարհային գործերում Ռուսաստանի տնտեսական-քաղաքական ազդեցության մեծացման մասին, ինչը, ի դեպ, արձանագրում է նաեւ արեւմտյան մամուլը: Չի բացառվում, որ տվյալ դեպքում գազը էական դեր խաղա ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ հակասությունների բռնկման ժամանակ, երբ եվրոպացիները ստիպված լինեն դեմ չգնալ Մոսկվային:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

PKK-ի առաջնորդ Օջալանը երկարաձգում է զինադադարի ժամկետը

Այս ժամկետը հունիսի 15-ին լրացել էր: PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը, հաշվի առնելով Թուրքիայի ազգային մեծ ժողովի ընտրությունները, մեկամսյա քարոզարշավի ընթացքում դադարեցրել էր կազմակերպության զինյալ գործողությունները՝ հայտարարելով միանձնյա հրադադար: Նա, ինչպես վկայում է «Դունյա բյուլտենի» լրատվական գործակալությունը, շուրջ 1 ամիս առաջ հրադադար հայտարարելիս ասել է. «Վերջին ժամկետը հունիսի 15-ն է: Հետեւաբար, հունիսի 15-ից հետո կա՛մ կսկզբնավորվի բանակցային լուրջ գործընթաց, կա՛մ էլ մեծ պատերազմ կբռնկվի, եւ տակնուվրա կլինի երկիրը»:

Ինչպես երեւում է, ընտրություններից հետո Օջալանը վերանայել է իր դիրքորոշումը, որ հենց հունիսի 15-ին՝ զինադադարի վերջնաժամկետի օրը հանդես է եկել «PKK-ի զինված գործողությունների դադարեցման ժամկետը երկարաձգելու» պատրաստակամությամբ: Այդ մասին հայտնել են Օջալանի դատապաշտպանները, որոնք հունիսի 15-ին Իմրալի կղզում, որտեղ ցմահ բանտարկված է PKK-ի առաջնորդը, հանդիպել էին իրենց պաշտպանյալին: Նրանք ի պատասխան լրագրողների՝ զինադադարի երկարաձգմանն առնչվող հարցին, ասել են. «Եթե զգացվի դրա անհրաժեշտությունը, ապա վաղը կամ մյուս օրը համապատասխան հայտարարություն կանենք»: «Իմրալիում Օջալանը պետական պաշտոնյաների հետ հանդիպում ունեցե՞լ է» հարցին պատասխանելիս դատապաշտպաններից Դողան Էրբաշը նշել է. «Այո, որքան ինձ հայտնի է, դա տեղի է ունեցել երեկ՝ հունիսի 14-ին»:

Հ. Ջ.

Ձվերը՝ տարբեր զամբյուղներում

ՄԱԲԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առիթներ ունեցել ենք գրելու, որ Հայաստանի ընդդիմությունն ու իշխանությունը քաղաքական դաշտի մեկ ընդհանուր համակարգ են, հետեւ վերծանելի, հետեւ կառավարելի, երբ պետք է՝ հարկավոր ուղղությամբ ուղղորդելի: Բազմիցս ասել ենք՝ երեք մարդ, Հայաստանի երեք նախագահները գծել են այն շրջանը, որով պտտվում է քաղաքական դաշտի արորը, եւ նրանք տարբեր ժամանակներում տարբեր ակտիվությամբ քաշում են: Առայժմ չի ստեղծվել չորրորդ բեւեռ, չորրորդ՝ այս սխեմայից դուրս գործող ուժ կամ վեկտոր: Ստեղծման փորձեր եղել են, կան, կլինեն, ընդ որում՝ մի մասը դրսի դիրիժորությամբ: Բայց դեռ փաստ չկա առանձնապես, ու ոչ ոք չգիտի՝ արդյոք որեւէ նոր ձեռնարկ կարո՞ղ է հասնել ընտրություններին, թե՞ այս երեքի գծած լաբիրինթոսում տապալվելու է՝ մինչեւ համապետական ընտրություններին հասնելը: Մեր ասած սխեմայի այժմ իսկ կենսունակության բազմաթիվ ապացույցներ են տեսանելի: Օրինակ՝ 2007 թվականի նոյեմբերի Մադրիդյան սկզբունքների փաստաթղթի կրկին հայտածվելը մամուլում. տեսեք, նույն թերթում ոչ հաճելի բացահայտումներ են արվում ԱԺ նախագահի ունեցվածքի վերաբերյալ, ով, ի դեպ, նախագահ Սարգսյանի եւ ՀՀԿ նախընտրական շտաբերը ղեկավարելու հավակնություն ունի:

Տես էջ 8

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ինչ պիտի usnրագրեին, nr չusnրագրեցին... Զավախքում

Ավարտվեց Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցը Վրաստան եւ Զավախք, ու ինչքան հարց կար մինչ այդ, ոչ մեկը պարզությամբ չօժտվեց, այլ դրանց ավելացան նորերը՝ չարդարացնելով այն սպասումները, թե որոշ հարցեր այդուամենայնիվ գոնե լուծման ուղին կգտնեն:

Վրացական լրատվամիջոցների մեջտեղ հանած «կոմյունիկեն»՝ խիստ կասկածելի բովանդակությամբ այդպես էլ չusnրագրվեց ու չներկայացվեց հանրությանը, միեւնույն ժամանակ, անհասկանալի թողնելով ինչպես կոմյունիկեի բովանդակության առնչությամբ մտահոգությունները, այնպես էլ դրա գոյության խնդիրը:

Ամեն դեպքում, «**Ազգի**» հետ զրույցում կաթողիկոսի այցելության նախավերջին օրը Վիրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը** հավանական էր համարել երկու եկեղեցիների միջեւ փաստաթղթի usnրագրումը, սակայն Մայր աթոռի՝ այցի վերջին օրվան առնչվող հաղորդագրության մեջ որեւէ usnրագրված փաստաթղթի մասին չի նշվում:

Հաղորդագրությունն այդ մասին լռում է, իսկ վրացական կողմը, ի դեմս Վրաստանի պատրիարքարանի արտաքին կապերի բաժնի ղեկավար **Գերասիմ Շարաշեիձեի**, գոնե տեղեկացրել է, nr փաստաթղթում ներկայացված դրույթների համադրման առնչությամբ աշխատանքը շարունակվում է:

«Գրուզիա օնլայն» կայքէջի տեղեկացմամբ, վրաց եկեղեցու հոգեւորականը նաեւ հերքել է այն լուրերը, թե կոմյունիկեն չի usnրագրվել հայկական կողմի անհամաձայնության պատճառով:

Վրաց պատրիարքարանի ներկայացուցիչը հավաստիացրել է, nr փաստաթղթի բովանդակության առնչությամբ իրենց դիրքորոշումները հստակեցնելու կարիք ունեն «երկու կողմերը»:

Դրա փոխարեն հաղորդագրության մեջ նշվում է, nr Հայոց կաթողիկոսը հունիսի 15-ի առավոտյան այցելել է Ախալքալաքում գտնվող «Սամցխե-Զավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդությունը», ապա հայ եւ վրաց հոգեւոր առաջնորդները եղել են Նինոծմինդայում, Խոջաբեկի Ս. Սարգիս հայկական եկեղեցում: Այս ամենին զուգորդվող ժողովրդական տոնախմբություններից հետո կաթողիկոսն այցելել է Վահան Տերյանի ծննդավայր Գանձա գյուղ, հետո՝ Ծալկա:

Հանդիպումների ավարտին Նինոծմինդայի Ժդանովական գյուղի սահմանակետում կաթողիկոսն ու պատրիարքը հրաժեշտ են տվել միմյանց, ապա կաթողիկոսը վերադարձել է Էջմիածին:

Այսպիսով, դարից ավելի Զավախք Հայոց կաթողիկոսի այցելության բացակայության բացը լրացված է, այցն իսկապես պատմական որակվելու բոլոր հիմքերն ունի, սակայն այն տարօրինակ լռությունը, nr պահպանվում է այցելության խնդրահարույց թեմաների քննարկման շուրջը, դրա մեջ

Մկրտիչ Մինասյանը՝ ՀԱԿ-իշխանություն երկխոսության մասին

Երեկ ԱԺ ՀՀԿ խմբակցության անդամ **Մկրտիչ Մինասյանը** մամուլի այն հրապարակման վերաբերյալ, թե ամբողջությամբ երիտասարդներից կազմված ՀՀԿ համամասնական ցուցակ գոյություն ունի, հերքեց այդ լուրը՝ դա անվանելով ժամանակավրեպ հարցադրում, մտավարժանքի արդյունք: Իսկ ՀԱԿ-իշխանություն երկխոսության վերաբերյալ էլ նկատեց. «Եթե երկխոսությունը պիտի ներառի ոչ իրական, ոչ իրատեսական հարցադրումներ, անիմաստ է այդ մասին խոսելը... Երկխոսությունը կա ու կայանում է, եւ երկխոսության մեջ որոշակի գործողություններ ընթացք ստացել են»: ՀՀԿ-ական պատգամավոր Մկրտիչ Մինասյանը շատ ավելի վաղ այժմ նախագահ Սարգսյանի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանի ղեկավարած «Ժողովրդական-դեմոկրատական» խմբի անդամ էր, ուզում ենք ասել՝ այժմ էլ առաջին ձեռքից տեղեկացված մարդ է, այնպես որ նա մի բան գիտի, nr ասում է՝ ընդդիմության ասած արտահերթ ընտրությունների համար քաղաքական, սոցիալական, հոգեբանական, իրավական ոչ մի հիմք չկա:

Մ. Խ.

WiFi ինտերնետ հանրային ավտոբուսներում

Երեւանի քաղաքապետարանը եւ Orange-ը մեկնարկում են պիլոտային նախագիծ հանրային տրանսպորտի 5 երթուղիներում

Երեւան, 16 հունիսի, 2011թ.: Այսօրվանից Երեւանի քաղաքային տրանսպորտի հինգ ավտոբուսների ուղեւորները կկարողանան անվճար օգտվել Wi-Fi ինտերնետ՝ Երեւանի քաղաքապետարանի եւ Orange-ի այսօր մեկնարկած պիլոտային նախագծի շրջանակներում: Հիմնականում ուսանողների երթեւեկը ապահովող հինգ երթուղիները սպասարկող ավտոբուսներում տեղադրվել են Orange MyFi 3G/Wi-Fi մոդեմներ, որոնք ստեղծում են շարժական Wi-Fi տարածք եւ հնարավորություն են տալիս միաժամանակ ցանցին միացնել հինգ սարք՝ սմարթֆոն, նեթբուք, պլանշետ եւ այլն:

«Սա կարեւոր նախագիծ է մեզ համար, մի կողմից՝ որովհետեւ թույլ կտա փորձել մեր շարժական MyFi ծառայությունը եւ դրա հնարավորություններն ամբողջ քաղաքի տարածքում, մյուս կողմից՝ քանի որ շատ ավելի հասանելի է դարձնում մեր ծառայությունները: Հուսով եմ, որ Երեւանի բնակիչներին դուր կգա այս հնարավորությունը, եւ նրանք կօգտվեն ավտոբուսում անցկացրած ժամանակից՝ այն ավելի բովանդակալից դարձնելու համար: Պիլոտային նախագծի հաջողության դեպքում մենք միտք ունենք ավելացնել Wi-Fi-ով ապահովված ավտոբուսների քանակը», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

ԱՆԹԻԼԻԱՍ

Արամ Ա կաթողիկոսն ընդունել է Լիբանանի երկու հայազգի նորանշանակ նախարարներին

Չորս ամիս տեւած խորհրդակցություններից ու բանակցություններից հետո Լիբանանում ձեւավորվեց կառավարություն՝ 30 նախարարներով: Հայկական համայնքը, որն ավանդաբար պարտադիր ներկայացված է լինում Լիբանանի ընդլայնված կառավարությունում, ներկայացված է երկու նախարարներով՝ Վրեժ Սաղունձյան եւ գնդապետ Փանոս Մանճյան: Հունիսի 15-ին վերջիններիս ընդունել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը: Շնորհավորելով երկու նախարարներին՝ կաթողիկոսը նշել է, որ չնայած Սաղունձյանի եւ Մանճյանի թեկնածությունները առաջարկել է ՀՅԴ-ն, սակայն նրանք պետք է իրենց գործունեությունն ուղղեն Լիբանանի ողջ հայությանը նպաստելուն եւ նրանց շահերը պաշտպանելուն: Կաթողիկոսը նաեւ նշել է, որ չնայած Լիբանանի ներկայիս կառավարությունը քաղաքական մեկ ուղղություն ունի, սակայն հայ համայնքը չպետք է կենտրոնանա մեկ կողմի հետ հարաբերություններում, այլ պետք է գործակցի բոլոր կողմերի հետ՝ ամբողջական Լիբանանի շահերը վեր դասելով: Իրենց հերթին՝ երկու նախարարները հավաստիացրել են, որ նվիրումով են ծառայելու Լիբանանի հայությանը եւ պաշտպանելու են հայ համայնքի իրավունքները:

Հ. Ա.

Գալստանյան սրբազանը Օսսավայում

Հայ առաքելական եկեղեցու Կանադայի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը հունիսի 10-ին Օսսավա է այցելել՝ մասնակցելու Ռուսաստանի Դաշնության ազգային օրվա տոնակատարություններին: Այնտեղ նա հանդիպել է Կանադայում ՌԴ-ի դեսպան Գեորգի Մամեդովին, որին շնորհավորելով՝ հայ հավատացյալների լավագույն մաղթանքներն է հաղորդել:

Օսսավայում սրբազանը հանդիպել է նաեւ Կանադայի արտգործնախարար Ջոն Բայրդի հետ, որին շնորհավորել է Համայնքների պալատում վերընտրվելու եւ արտգործնախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ:

Ուղեւորության ժամանակ սրբազանին ուղեկցել են հայր Միրոն Սարգսյանը, Իվան սարկավագ Գյադայանը եւ կառավարական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Հակոբ Արսլանյանը:

Հ. Ծ.

Անչափահասների կատարած հանցագործությունները նվազել են 32 դեպքով

Երեկ «Հայելի» ակումբի հյուրերն էին ոստիկանության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելի Դուրյանը, նույն վարչության պետի տեղակալ, 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Վաթյանը եւ հոգեբան Մարինե Պետրոսյանը: Տկն Դուրյանը ներկայացրեց հանրապետությունում անչափահասների կատարած հանցագործությունների հինգ ամսվա տվյալները: Նախորդ տարվա հետ համեմատած անչափահասների կատարած հանցագործությունները նվազել են 32 դեպքով, հինգ ամսում գրանցվել է 169 դեպք:

Իսկ թե որո՞նք են հանցագործություններ ծնող դրդապատճառները, հոգեբանը ներկայացրեց իրենց հետազոտությունների արդյունքները. գերակշռում են երկու տեսակի հանցագործություններ: Գերակշռում են հոգեբանական գործոնները, բռնի-ագրեսիվ եւ շահադիտական դրդապատճառներով կատարված հանցագործությունները: Իսկ պատճառներից են անչափահասների շրջանում ցածր ինքնահսկումը, ոչ բավարար դաստիարակությունը եւ այլն: Ուրախալի է, որ նվազել է կրկնահանցագործների թիվը, եւ համաներումը կիրառվել է նաեւ անչափահասների նկատմամբ:

«Ազգի» հարցին պատասխանելով, տկն Դուրյանն ասաց, որ անչափահասների վարչությունում հաշվառված են 20 մուրացիկներ ու նրանց հետ մշտապես տարվում են բացատրական աշխատանքներ: Հիմնականում մուրացիկությամբ զբաղվում են առանց հոր, սոցիալապես վատ վիճակում գտնվող ընտանիքների երեխաները: Նա չբացառեց, որ կան դեռ դեպքեր, որ չափահասների դրդմամբ մուրացիկություն են անում անչափահասները, եւ այդ դեպքերը մշտապես ոստիկանության ուշադրության կենտրոնում են գտնվում: Գրանցվել է անչափահաս աղջիկների մարմնավաճառությամբ զբաղվելու 4 դեպք: Սակայն սեռական շեղվածության ու նրանց խնդիրներով զբաղվող որեւէ կառույց առայժմ չի գործում, եւ դրա պահանջն առաջնային ու լուրջ խնդիր է: Գրանցվել է նաեւ անչափահասներին հանցագործությունների մեջ ներքաշելու 6 դեպք:

Աշտարակում անչափահասին բռնաբարելու գործով պրն Վաթյանը տվեց բացատրություններ. «Աշտարակի բնակիչ Լուսինե Թովմասյանից ստացվել է հաղորդում եւ մայիսի 31-ին բերման է ենթարկվել Աշտարակ քաղաքի բնակիչ Ռուբիկ Հովհաննեսի Պողոսյանը: Փաստի առթիվ ՀՀ քր. օր.-ի 139 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, նշանակվել են դատահետքաբանական, դատաբժշկական փորձաքննություններ, հարցաքննվել են բազմաթիվ անձիք: Ներկայումս դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները սակավ են, արդյունքները դեռեւս բավարար չեն մեղադրանք առաջադրելու համար, քանի որ տուժողը 2007 թ. է ծնվել եւ փաստի առթիվ չի կարող համապատասխան ցուցմունքներ տալ: Ծնողի հաղորդման հիման վրա հարուցվել է քր. գործ: Երբ կստացվեն դատաբժշկական փորձաքննության վերջնական եզրակացությունները, դրանով էլ կշարժվենք»: Այժմ երեխայի առողջական վիճակը բավարար է»:

Զարմանալի է, որ դեպքից անցել է 17 օր, դեռ դատաբժշկական փորձաքննության վերջնական եզրակացությունը չկա: Այս փաստը մտորելու առիթ է տալիս:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Նոր քաղաքական, գաղափարական հայեցակարգ

Հուլիսին Հայաստանի դեմոկրատական կուսակցության եւ Սեդրակ Ամեմյանի գլխավորած Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ փորձ կարվի միավորելու հայասանյան քաղաքական դաշտի ձախ ուժերին՝ երկրում ժողովրդավարական, սոցիալական հայեցակարգ հասատելու նպատակով: Այս մասին երեկ հրավիրած ասուլիսում ասաց ՀԴԿ նախագահ **Արամ Գասպարի Սարգսյանը**՝ հավելելով, որ հուլիսի համաժողովը նաեւ նպատակ ունի միավորել երկրի ձախ ուժերին՝ առաջիկա խորհրդարանական ընտրություններին միասնական ներկայանալու համար: Իսկ ներքաղաքական ներկա դրությունը Հայաստանում Սարգսյանը անվանեց «անհասկանալի պայքար». «20 տարվա ընթացքում երկրում իշխանության գաղափարական փոփոխություն տեղի չի ունեցել. մենք շրջապտույտի մեջ ենք, որը թույլ չի տալիս բոլոր գաղափարական ուժերին ներկայանալ քաղաքական ներկայությամբ», նշեց Դեմոկրատական նախագահը: Այս հանգամանքն, անշուշտ, չի կարող առաջ չբերել երկրում նոր՝ ժողովրդավարական, սոցիալական հայեցակարգի առաջացման հասարակական պահանջարկ, ինչը, եւ Սարգսյանի խոսքերով, իրենք կներկայացնեն առաջիկա հուլիսին: Այսօրվա ներքաղաքական իրավիճակի՝ կոնկրետ իշխանություն-ՀԱԿ «երկխոսության» մասին բանախոսը կարծիք հայտնեց, թե «պարզվեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը շախմատ խաղալ չգիտի, ու դա հասկացան նաեւ ՀՀՇ-ական նրա կողմնակիցները՝ կուսակցության շարքերը լքելով: Այժմ ՀԱԿ-ի ունեցած ուժն ասելիանաբար կնվազի, որը, պետք է նկատենք, իշխանությունը հատուկ ուռճացրել էր՝ իր նպատակների համար»: Այսօր էլ, ըստ Սարգսյանի, ՀԱԿ-ը այլեւս լուրջ գործոն չէ. «Եթե ձեր հանրահավաքներին դուք չեք կարողանում ապահովել առնվազն 30 հազար մասնակիցների ներկայություն, ուրեմն դուք չեք կարող Հայաստանում համարվել լուրջ քաղաքական գործոն», ասաց Արամ Սարգսյանը:

Խոսելով արտաքին քաղաքականության խնդիրների մասին, մանավանդ Կազանի առաջիկա եռակողմ հանդիպմանն ընդառաջ, Սարգսյանը կոչով դիմեց նախագահ Սերժ Սարգսյանին՝ ինչպես հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման ժամանակ, այժմ էլ մադրիդյան հիմնարար սկզբունքները ստորագրելու հրավիրել Հայաստանի բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներին: Ընդհանուր առմամբ՝ Ղարաբաղի հարցով Դեմոկրատի ղեկավարի մեկնաբանմամբ, մենք ոչ ճիշտ ճանապարհով ենք գնում. «Հարցը պետք է տեղափոխել իրավական դաշտ: Հայաստանը պետք է ճանաչի ԼՂՀ անկախությունը, քանի որ դա կնշանակի, որ Հայաստանը ճանաչում է Ղարաբաղի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու որոշման օրինականությունը, ինչն, ի դեպ, հիմնված էր ԽՍՀՄ օրենսդրությամբ: Հակառակ պարագայում, սացվում է, որ ԼՂ հիմնահարցը կապ ունի Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, ինչն այդպես չէ», նկատեց Սարգսյանը: Հետագայում արդեն, բանախոսի խոսքերով, ԼՂ ժողովուրդը, արտահայտելով իր ինքնորոշման իրավունքը, կինքնորոշվի՝ ցանկանում է մնալ անկախ պետությունն, թե՞ միանալ Հայաստանին: Իսկ թե որքանո՞վ է այս հավանական քայլը բխում ներկա քաղաքական իրավիճակից, Սարգսյանը պատասխանեց. «Յուրաքանչյուր պետություն իր քաղաքականությունը պետք է տանի ազգային շահերի հիման վրա»:

Հ. Ա.

Միակ մարտիստ Դավիթ Հակոբյանը՝ Ղարաբաղի հարցի մասին

Հայաստանի միակ, միայնակ եւ անկրկնելի մարտիստ **Դավիթ Հակոբյանը** Կազանի հանդիպումից ոչ մի ակնկալիք չունի՝ նույն «բալտավնյան» է լինելու ըստ նրա: Կրկնելով արցախյան ֆորումում նախագահ Սարգսյանի ասածը՝«Մեզ անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը՝ ցամաքային կապով Հայաստանի հետ», նա լրագրողների հետ հանդիպման ժամանակ երեկ հարցրեց. «Ի՞նչ է նշանակում ցամաքային կապ՝ մեկ շրջա՞ն, մեկ կիլոմե՞տր, մեկ էջի կա՞ն, անհայտ է: Որպես ի՞նչ եք միացնում ինքնորոշման դրոշի տակ: Որպես մա՞րզ, իսկ արցախցին համաձա՞յն է ձեր մարզը դառնալուն: Չկա Արցախի տեսակետ, իսկ տարբերակը՝ փոխզիջում: Սա պաշտոնական Երեւանի տեսակետն է»: Նա նաեւ նշեց Արցախի հարցի լուծման Բաքվի, անգլոսաքսոնական կամ թուրք- ամերիկյան տեսակետների մասին (վերջինս էլ հենց ըստ նրա՝ Մադրիդյան սկզբունքների հիմքով է), այն է՝ «ազատագրված, գրավյալ հողերը հանձնում ենք թուրքերին փուլ առ փուլ, տեղադրվում են խաղաղապահ ուժեր, ազերիների վերադարձ եւ այլն»: Չորրորդ տեսակետն էլ, ըստ մարտիստի, պաշտոնական Ստեփանակերտի տեսակետն է. այն տեղ չի հասնում, քանի որ Արցախը մնացել է բանակցային գործընթացից դուրս եւ փաստացի պաշտոնական Երեւանը Արցախին պահում է որպես դիվանագիտական պատանդ՝ իր քաղաքական շահագործումների համար: Բայց մարտիստը մարտիստ չէր լինի, եթե իր տարբերակը չառաջարկեր. «Հայաստանը սեպարատ դուրս է գալիս բանակցային գործընթացից ու իր տեղը, որպես գլխավոր դերակատար, զիջում է Արցախին: Ոչ թե շիթիլ է նրան անում իր հետ, այլ՝ Հայաստանը դուրս է գալիս ու իր տեղը զիջում Արցախին», իր առաջարկն արեց նա:

Մ. Խ.

Կատարյալ նոնսենս

Վարչապետ Տիգրան Սարգսյանը BBC-ին ասել է, որ Հայաստանը պատրաստ է Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ ստեղծել: «Մենք ուրախ կլինենք, եթե մեր թուրք գործընկերները նույնպես գան այն եզրակացության, որ 21-րդ դարում փակ սահմաններ ունենալը նոնսենս է», ասել է Տիգրան Սարգսյանը:

Տրամաբանական է, որ Հայաստանի վարչապետի խոսքի հասցեատերը Թուրքիան է, եւ պատասխանն էլ պիտի հնչեր Անկարայից: Սակայն, ինչպես հայտնի է, Թուրքիայում խորհրդարանական ընտրություններից հետո Էրդողանի կառավարությունը վայր է դրել լիազորությունները: Գուցե հենց այդ պատճառով էլ Հայաստանի վարչապետի առաջարկությունը մեկնաբանելու պատիվն իրեն է վերապահել... Ադրբեջանի նախագահի աշխատակազմում արտաքին քաղաքական հարցերի պատասխանատու Նովրուզ Մամեդովը: Բայց չէ՞ որ կառավարությունն է «պաշտոնականի կարգավիճակում», մինչդեռ Թուրքիայի նախագահը պաշտոնավարում է կատարյալ լիազորությամբ եւ կարող էր իր շրջապատում որեւէ մեկին հանձնարարել, որ անդրադառնա Հայաստանի վարչապետի հնչեցրած գաղափարին:

Բայց Ադրբեջանն առաջ է ընկել ավագ եղբորից՝ կարծես հասկացնելով, որ հայ-թուրքական հարաբերությունների հարցում դերերը փոխված են. Անկարան թութակի պես կրկնում է այն, ինչ ասում են Բաքվից:

Մամեդովն, ըստ այդմ, հուշում է, որ «Հայաստանն իրոք առանց նախապայմանների կարող էր իր զորքերը դուրս բերել Ադրբեջանի քսան տոկոս գրաված տարածքներից»: Նախ, ո՞վ է ասել, թե Հայաստանը «զորք ունի Ադրբեջանի տարածքում», երկրորդ՝ ի՞նչ կապ ունեն հայ-ադրբեջանական հարաբերությունները հայ-թուրքականի հետ: Երրորդ, երբ Հայաստանն ասում է, թե պատրաստ է առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ, չի նշանակում, թե դա ավելի շատ Հայաստանին է պետք, քան Թուրքիային կամ նույն Ադրբեջանին:

Այնպես որ, կատարյալ նոնսենս է ոչ միայն այն, որ Թուրքիային հղած հորդորին պատասխանում է Ադրբեջանի նախագահի աշխատակազմը, այլեւ՝ որ Նովրուզ Մամեդովը կարծում է, թե հայ-թուրքական սահմանի բացումն այնքան էական է, որ հանուն դրա հայկական կողմը պիտի կատարի Բաքվի բոլոր պահանջները:

Սա, իրոք, նորամուծություն է միջազգային հարաբերություններում, մի նոու-հաու, որ վստահաբար կարելի է համարել Իլհամ Ալիեւի դիվանագիտական ամենամեծ «ձեռքբերումը»: Առանց այդ էլ հայտնի է, որ Ադրբեջան պետությունն իր ստեղծմամբ եւ գոյությամբ պարտական է Թուրքիային: Ի՞նչ կարիք կա եւս մեկ անգամ բարձրաձայնելու սեփական «աթոռինածին» լինելը: Թե՞ Նովրուզ Մամեդովն սկսել է կասկածել, որ «հայրը կարող է մոռանալ իրենց»:

Ամեն ինչ պատկերացնելի էր, բացի այս մեկից:

ՎԱՀԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՅՈՒԲԱՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ամիրյան փողոցի իրացման գոտու բնակիչները հայտնվել են «աղետալի վիճակում»

Նրանք բաց նամակ են հղել երկրի նախագահին

2004 թվականից իրացման տարածք համարվող Ամիրյան փողոցի 4/16, 4/18, 4/20, 4/22, 4/24 հասցեներում գրանցված բնակիչները բաց նամակով դիմել են երկրի նախագահ Սերժ Սարգսյանին: Նշելով, որ 2005-ի գարնանը իրենք ստիպված են եղել կնքել անշարժ գույքի իրացման եւ փոխհատուցման պայմանագրեր, համաձայն որոնց՝ 30 ամիս հետո իրենց տների տեղում կառուցվող շենքից պետք է ստանային բնակարաններ, նրանք հայտնում են, որ դա տեղի չի ունեցել: «Անցել է 75 ամիս, բայց մենք չենք ստացել ո՛չ պայմանագրերով նախատեսված բնակարանները, ո՛չ բնակության վարձակալության գումարները, ո՛չ շինարարության ձգձգման տուգանքները: Մեզ մինչ այժմ չեն հատկացվել սեփականության վկայականները, եւ մենք չենք կարող ոչ մի իրավական գործողություն կատարել կիսակառույց տարածքների նկատմամբ՝ վաճառք, նվիրատվություն, կտակ: Զրկվելով ադրուստի միջոցներից՝ մենք հայտնվել ենք աղետալի վիճակում, քանի որ վարձակալած բնակարաններից մեզ հանել են», նշված է նրանց բաց նամակում:

Ըստ Ամիրյան փողոցի 24 ընտանիքների, տարածքը ձեռք բերած Մելիք Գասպարյանի ժառանգները հայտարարում են, որ իրենց ընկերության բաժնետերերն են բարձրաստիճան անձիք, եւ տալիս են կոնկրետ անուններ, ավելացնելով, որ «մեր դեմ խաղ չկա»:

Բնակիչները էլ բաց նամակով հայտարարում են, որ դիմելու են Եվրոպական դատարան իրենց խախտված իրավունքների վերականգնման համար, որի դիմաց «վճարելու է պետությունը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության ոչ մի մեղք չունեցող հարկատուները»:

Երկրի նախագահից բնակիչները խնդրում են Հայաստանի Հանրապետության անունից կնքված պայմանագրերի պարտավորությունների կատարում, շինարարության ժամկետների խախտման տուգանքների վճարում, բնակարանների սեփականության վկայականների տրամադրում, ժամանակավոր բնակարանների վարձակալության գումարների հատկացում, շինարարության ավարտի կոնկրետ եւ ռեալ ժամկետներ:

Մեր կողմից ավելացնենք, որ համանման խնդրի առջեւ են կանգնել նաեւ այլ տարածքների (Ֆիդրուսի եւ այլն) բնակիչներ, որոնք կնքել են պայմանագրեր եւ վարձով ապրելով՝ սպասում են մինչ բնակարան ստանան, բայց պայմանագրային ժամկետներն ավարտվում են, իսկ բնակարանները դեռ չեն ստացել:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

172,5 մլն դրամի վնաս պետությանը

Սեփական ընկերությունը կանխամտածված սնանկացման հասցնելու միջոցով

Կանխամտածված սնանկության վերաբերյալ մեղադրական եզրակացություն է հաստատել գլխավոր դատախազության սեփականության եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազը: Ինչպես տեղեկացանք գլխավոր դատախազության հանրային կապերի վարչությունից, նախաքննությամբ հիմնավորվել է, որ Երեւանի բնակիչ Հ. Մարգարյանը, 2000-ին հիմնադրելով «Երեբունու գինու-կոնյակի գործարանը», 2009-ին, ավելի քան 61 մլն դրամ հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով օտարել է ընկերության ամբողջ գույքը, ընկերությանը զրկելով արտադրական կարողություններից եւ վճարունակությունից: Այդ կերպ նա իր հիմնադրած ընկերությանը հասցրել է կանխամտածված սնանկության՝ պետությանը պատճառելով խոշոր չափի՝ 172,5 մլն դրամի վնաս:

Հաղորդագրության մեջ տեղեկացվում է, որ Հ. Մարգարյանը նախաքննության ընթացքում վերականգնել է 50 մլն դրամի վնասը, իսկ նրան առաջադրված մեղադրանքով գործն ուղարկվել է դատարան:

Այս օրինակը մտածելու տեղիք է տալիս, թե որքանո՞վ է պետությունը ապահովագրված նման դեպքերի կրկնությունից եւ որքանո՞վ է մեր օրենքը կատարյալ նման դեպքերի համար: Գաղնիք չէ, որ այս օրինակին հետեւելու ցանկություն ունեցող այլ «գործարարներ» հաստատ քիչ չեն լինի:

Ա. Մ.

Золотая корона համակարգով Ռուսաստանից Հայաստան փոխանցումները սկսած 0,5 տոկոսից

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», միջազգային դրամական փոխանցումների համակարգը 2011-ի հունիսի 20-ից Ռուսաստանից Հայաստան ուղարկվող փոխանցումներն իրականացնելու է նոր, իջեցված սակագնով՝ սկսած 0,5 տոկոս, նախկին 1,5 տոկոսի փոխարեն: «Արդշինինվեստբանկը» հանդիսանում է Золотая корона -ի ամենախոշոր հայկական գործընկեր բանկը եւ հնարավորություն է տալիս իր բոլոր մասնաճյուղերում ստանալ դրամական փոխանցումներ ռուբլով, դոլարով եւ եվրոյով: Բանկի մասնաճյուղերում համակարգով ուղարկված գումարի ստացման դեպքում, ստացողից միջնորդավճար չի գանձվում, վճարում է միայն ուղարկողը:

Տեղեկացվում է նաեւ, որ «Արդշինինվեստբանկը» փոխանցումներ է իրականացնում MoneyGram, Contact, Migom, Быстрая почта, IntelExpress, RIA, Coinstar, Blizko միջազգային համակարգերով:

Ա. Մ.

Ճարտարապետների միությունն ակնկալում է ավելի մեծ իրավասություններ

Հայաստանի ճարտարապետների միությունը տարածել է հայտարարություն, որի միջոցով դիմում է ինչպես հասարակության լայն շերտերին, այնպես էլ հանրապետության նախագահին, Ազգային Ժողովին ու կառավարությանը: Հայտարարության միջոցով Ճարտարապետների միությունը մի շարք առաջարկություններ է անում, օրինակ՝ առաջարկում է ճարտարապետական մասնագիտական գործունեության կարգավորումը վստահել իրենց միությանը՝ միաժամանակ իրենց փոխանցելով մասնագետների որակավորման ու արտոնագրման լիազորությունը: Միությունը առաջարկում է վերանայել քաղաքաշինական ոլորտի կառավարման օղակների կազմակերպական ու կադրային համալրման քաղաքականությունը: Առաջարկությունների մեջ նշվում է՝ միությունը նաեւ ցանկանում է, որ քաղաքաշինական կարեւոր փոփոխությունների ծրագրումն ու կառույցների նախագծումը կազմակերպվեն բացառապես մրցույթների միջոցով: Ճարտարապետների միությունն ակնկալում է որակապես նոր համագործակցություն ինչպես պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ ամբողջ հասարակության հետ:

Ի. Պ.

Վերելակների մեծամասնությունը ժամկետանց է ու անբարվոք վիճակում

Որ հանրաքվեությունում վերելակներն անսարք վիճակում են, բնավ նորություն չէ: Միայն Աստված գիտի, թե Հայաստանի ո՞ր քաղաքացու համար ո՞ր վերելակը ի՞նչ անակնկալ է պատրաստել: Առհասարակ, վերելակները վտանգավոր օբյեկտներ են, ու որեւէ վերելակից օգտվելիս մենք ենթագիտակցորեն վախենում ենք: Սակայն վերելակների անվտանգության խնդիրները մեզանում իչ են բարձրաձայնվում: Բնակիչները եւ այդ վտանգավոր օբյեկտների անվտանգության համար պատասխանատուները սթափվում են միայն այն պահերին, երբ դժբախտ պատահարներ են լինում: Վառ ապացույցը հենց երեկ կազմակերպված ասուլիսն էր, որը բառացիորեն հաջորդեց հունիսի 6-ին Ե. Կողբացի 3 ա շենքում տեղի ունեցած դժբախտ պատահարին: Հիշեցնենք, որ վերոնշյալ հասցեում տեղակայված շենքում 2003 թվականին ծնված Էդգար Հարությունյանը վերելակի հորն էր ընկել, ապա կոտրվածքներով տեղափոխվել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն: Երեկ հիվանդանոցից **«Ազգը»** տեղեկացավ, որ երեխան ապաքինվում է, նրա վիճակն արդեն մոտ է բավարարին: «Հենարան» ակումբի բանախոսներն այս պատահարին եւս անդրադարձան, բայց մինչ այդ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի տնօրեն **Ատոմ Պետրոսյանը** տեղեկացրեց, որ հանրապետությունում գրանցված վերելակների թիվը կազմում է 5645, որից 1190-ը վարչական կառույցների վերելակներն են, իսկ 4455-ը՝ բնակելի ֆոնդինը: Ըստ Ատոմ Պետրոսյանի՝ թեեւ տարիների ընթացքում կատարվել են փոփոխություններ ու ոլորտում առաջընթաց կա. «Սակայն փորձը ցույց է տալիս, որ վերելակների մեծամասնությունը բարվոք վիճակում չէ ու ժամկետանց է»: Նախարարության ներկայացուցչի խոսքով՝ տեխանվտանգության ազգային կենտրոնը վերահսկողություն իրականացնող կառույց չէ: Վերահսկողությունը կատարում են ստեսվարող սուբյեկտները, որոնք պետք է պայմանագիր կնքեն տեխանվտանգության ազգային կենտրոնի հետ, որպեսզի վերջինս իրականացնի փորձաքննություն: Անցյալ տարի կատարված փորձաքննությունից հետո, ըստ Ատոմ Պետրոսյանի, միայն Երեւանում 361 վերելակ ստացել է բացասական եզրակացություն, որից 312-ը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում տեղակայված վերելակներն են: Մի վերելակի փորձաքննության իրական արժեքը 2930 դրամ է: Պարոն Պետրոսյանի փոխանցմամբ՝ նույնիսկ հոգուս բնակիչների ու համայնաշիրությունների՝ տեխանվտանգության կենտրոնը պայմանագիրը կնքում է 2500 դրամով. «Արդեն կարգադրություն եմ տվել, որ փորձաքննություն անցած վերելակների դրական կամ բացասական եզրակացությունը փակցնեն վերելակների վրա»:

Այնուհետեւ անդրադառնալով Կողբացի 3 ա հասցեում տեղի ունեցած դժբախտ պատահարին՝ փորձագետ **Լուսինե Հովհաննիսյանը** նշեց, որ տվյալ վերելակը փորձաքննություն է անցել անցյալ տարի ու դրական եզրակացություն է ստացել, բայց այս պահին վերելակը չի շահագործվում ու ենթարկվելու է արտահերթ փորձաքննության: Փորձագետի փոխանցմամբ՝ երեխան վերելակում մի քանի անգամ տարբեր կոճակներ է սեղմել, մնալով 5-րդ ու 6-րդ հարկերի միջեւ՝ փորձել է ինքնաէվակուացիա կատարել, փորձել է բացել հորանի ու խցիկի դռները, այսինքն՝ նրսի ու դրսի դռները եւ ընկել է հորանը: Լուսինե Հովհաննիսյանի խոսքով՝ երեխան ինքն է պատմել, թե ինչպես է վարվել վերելակի հետ, որպեսզի կարողանա դուրս գալ: Ապա փորձագետը զգուշացրեց բնակիչներին, որ մինչեւ 12 տարեկան երեխաները վերելակից ինքնուրույն օգտվելու իրավունք չունեն: Այս զգուշացումը, ըստ Լ. Հովհաննիսյանի, նշված է եղել խորհրդային տարիներին վերելակ արտադրող բոլոր գործարանների պահանջներում: Իսկապես, լավ կլինի, որ մինչեւ 12 տարեկան երեխաները միայնակ վերելակ չնստեն, իսկ վերելակի հետ խաղալու վաս սովորությանն էլ վերջ տան: Վերելակների անվտանգության համար, իրոք, առաջինը պետք է անհանգստանան բնակիչները, սակայն ամեն ինչ միայն բնակիչների վրա բարդելն էլ ճիշտ չի լինի: Ստեղծված իրավիճակում Ատոմ Պետրոսյանը բնակիչներին հետեւյալ խորհուրդը տվեց. «Որ ամեն ամիս փող եք տալիս համաշիրությունների ղեկավարներին, պահանջեք նրանցից, որ հոգան նաեւ վերելակների անվտանգության մասին»:

Ի. Պ.

ՄԵՐ ՏՊԱԳՐԱՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մի շենքի տանիքի ողիսականը՝ 1 տարի անց

Երեւանի քաղաքապետարանը գիտի՞, թե ինչպես են ծախսվել տրամադրված միջոցները

Մոտ մեկ տարի առաջ «Ազգն» անդրադարձել էր Երեւանի Սեբաստիայի փողոցի 24/1 շենքի 4-րդ մուտքի բնակիչների բողոքին՝ շենքի տանիքի իրենց հատվածի փլվելու մասին: Մեր թերթի 2010-ի մայիսի 13-ին հրապարակված «Սպասել մինչեւ շենքը փլվի՞» հոդվածում նշել էինք, որ մուտքի բնակիչները շենքի տանիքի իրենց հատվածի վիճակի մասին բազմիցս ահազանգել եւ դիմել են համապատասխան մարմիններին՝ տարածքը սպասարկող համաշիրությանը, Մալաթիա-Սեբաստիա համայնքապետարանին, Երեւանի քաղաքապետարանին, բայց ապարդյուն: Տանիքի գրեթե բացակայությունն այդ հատվածում բերել էր նրան, որ վնասված պանելն ու նրան պահող պտուտը հեղեղվում են ձմռանը հալվող ձյան եւ գարնանն ու աշնանը անձրեւների ջրերով, որի հետեւանքով դրանք կարող են փլուզվել ցանկացած պահի:

Նշելով այս մասին, հարց էինք բարձրացրել, թե ավելի ճիշտ չէ՞ր լինի անհամեմատ ավելի իչ ծախսերով տանիք վերանորոգել, քան թե շենքը վթարային դարձնել, ապա վերականգնել կամ նորը կառուցել:

Մեր հրապարակմանն այն ժամանակ օպերատիվ արձագանքեց Երեւանի քաղաքապետարանը: Թերթին ուղարկած հաղորդագրության մեջ Երեւանի քաղաքապետարանից ստացել էինք հետեւյալ պատասխանը. «Հարգելի խմբագրություն, «Ազգ» օրաթերթի մայիսի 13-ի համարում տպագրված «Սպասել մինչեւ շենքը փլվի՞» վերնագրված հոդվածի առնչությամբ տեղեկացնում ենք, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ Սեբաստիա փողոցի հ 24/1 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ: «Սեբաստիա-2» համաշիրությանը տրամադրվել են վերանորոգման համար անհրաժեշտ շինանյութերը»: Պատասխանին կից ներկայացվել էին համապատասխան շինանյութերի տրամադրման մասին որոշման պատճենները:

Մեր գոհունակությունը հայտնելով քաղաքապետարանի օպերատիվ պատասխանից, հույս հայտնեցինք, որ նույն օպերատիվությամբ էլ կկատարվեն տվյալ շենքի տանիքի վերանորոգման աշխատանքները: Սակայն անցել է ուղիղ մեկ տարի, եւ շենքի տանիքի այդ նույն հատվածը մնացել է չվերանորոգված: Մուտքի վերեւում գազի համար բացված օդանցքից երեւում է բաց երկինքը, իսկ մուտքի պատերն ավելի են քայքայվել այս մեկ տարվա ընթացքում:

Այս իրավիճակում մեզ մի քանի հարց է հետաքրքրում:

Առաջին հարց՝ ի՞նչ է տեղի ունեցել Երեւանի քաղաքապետարանի կողմից «Սեբաստիա-2» համաշիրությանը տրամադրված շինանյութերի հետ, եթե տանիքը մինչ օրս էլ մնում է նույն վիճակում:

Հարց երկրորդ՝ բնակիչներից սպասարկման վարձ պահանջող, բայց որեւէ սպասարկում չիրականացրած նույն համաշիրությունը ինչո՞ւ հաշվետվություն չի ներկայացնում բնակիչներին, թե ի՞նչ աշխատանքներ է կատարել ընդհանրապես եւ մասնավորապես տանիքի նորոգման ուղղությամբ:

Հարց երրորդ՝ Երեւանի քաղաքապետարանը իր տրամադրած միջոցների համար կատարված աշխատանքի հաշվետվություն պահանջո՞ւմ է, թե՞ ոչ:

Հարց չորրորդ՝ Երեւանի նոր քաղաքապետ Կարեն Կարապետյանին երեւանցիների ամենօրյա կյանքին առնչվող նման «մանր» հարցեր հետաքրքրո՞ւմ են, թե՞ նա միայն սահմանափակվում է համաքաղաքային հարցերի շուրջը տեսական դատողություններ անելով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գնողունակության համարժեքության ցուցանիշը՝ որպես շղարշ

ՀՀ տնտեսությունում համաշխարհային միջին ցուցանիշների հասնելու վերաբերյալ մեր պաշտոնյաների հնչեցնող հայտարարությունները, ինչքան էլ թեռահավատորեն ընդունվեն հայաստանյան հանրության կողմից, պարզվում է, տնտեսագիտական հիմնավորում ունեն: Դրանք տնտեսվարական միտքը արտահայտում են PPP հապավումով, որը հայերեն թարգմանությամբ հնչում է որպես **գնողունակության համարժեքության ցուցանիշ**: Այնպես որ, երբ տողերիս հեղինակը ԱՄՆ-ում 1868 թվականից լույս տեսնող «Համաշխարհային թվեր. 2011» տեղեկատուում ՀՀ 1 բնակչին հասանելի ՀՆԱ-ի տարեկան 5500 դոլար թվի հանդիպեց, այն ընդունեց տնտեսագիտական համապատասխան ըմբռնումով: Առավել եւս, որ այս թվի պատասխանատու հրապարակողը ՀՀ գործադիր բարձրագույն իշխանությունն է: Ասենք, Ուզբեկստանի 2800 դոլարի, առավել եւս՝ Սոմալիի 600 դոլարի կողքին մեր ցուցանիշն իրոք տպավորիչ է: Բայց ուր են մեր օրական 15 դոլարի հասնող գումարները, որոնք տեսանելի որեւէ ձեւով չեն երեւում ոչ միայն մեր կենցաղում, այլեւ մեզ շրջապատող այլեւայլ ոլորտներում՝ առողջապահության ու կրթության, գիտության ու սոցիալական ենթակառույցներում: Չենք փորձի անգամ ակնարկել հնարավոր չարաշահումների մասին, քանզի գործ ունենք շատ մեծ թվերի ու գումարների հետ, որոնք ամենամեծ ցանկության պարագայում անգամ պարզապես հնարավոր չէ յուրացնել: Խոսքը 20 եւ ավելի միլիարդ դոլարի թվերի մասին է, որոնք վերջին տարիների մեր 6-7 մլրդ դոլար իրական ՀՆԱ-ի պարագայում, նշված 5500 դոլար անվանական ցուցանիշի դեպքում, ՀՀ ՀՆԱ-ն հասցնում են 20 եւ ավելի միլիարդների:

Ուրեմն ի՞նչն է հարցը կամ որտե՞ղ է թաղված շան գլուխը: Պարզվում է՝ այն գտնվում է 2003 թվականին ընդունված ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի յուրօրինակ գաղափարախոսությունում: Փաստաթղթի «Աղքատությունը եւ անհավասարության կրճատումը» բաժնի 98-րդ կետում ասվում է. «Ինչ վերաբերում է աղքատության չափման միջազգայնորեն ընդունված ցուցանիշներին, այն է՝ մարդկանց թիվը, որոնք ապրում են 1, 2 եւ 4 ԱՄՆ դոլարից պակաս գումարով, ապա 2005 թ. նրանք համապատասխանաբար կկազմեն ընդհանուր բնակչության 13,8, 35,9 եւ 68,3 տոկոսը, 2010 թ. 4, 20,5 եւ 42,1 տոկոսը, իսկ 2015 թ. 2,7, 6,8 եւ 27,6 տոկոսը»:

Ծանոթացեք հետագա բացատրությանը. նշված գումարները հաշվարկվում են հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշը, արդեն ներկայացված PPP-ն, որը 2001 թվականին սահմանվել է 3,38 եւ նախատեսվում է, որ 2002-2015 թթ. ժամանակահատվածում կմնա անփոփոխ, պահպանելով 2001 թ. մակարդակը: 3,38 PPP-ն նշանակում է, որ ՀՀ-ում 1 ԱՄՆ դոլարը իր գնողունակությամբ համապատասխանում է 3,38 դոլարին ԱՄՆ-ում:

Վստահ եմ՝ յուրօրինակ տնտեսվարության թե տնտեսագիտության տարաբանությունը ընթերցողին պարզ դարձավ: Մնում է փորձել պարզել, թե ինչքանով է ընդունելի ու կիրառելի հայաստանաբնակներիս ու ՀՀ-ի ներկայիս տնտեսական հարաբերությունների պայմաններում: 3,38 ցուցանիշը հաշվարկվել է՝ նկատի ունենալով տարբեր երկրներում ապրանքների, ծառայությունների, սպառակումների, մարդ արարածին անհրաժեշտ այլ պահանջմունքների միջինացված գների միջազգային համադրումների հանրագումարը: Այն ինչ-որ առումով կարելի էր ընդունելի համարել 2001 թվականին ՀՀ-ում որոշ ապրանքների ու ծառայությունների գները նկատի ունենալու պարագայում: Ասենք, երբ կարտոֆիլի կիլոգրամը 30 դրամ էր, խնձորինը՝ 40 դրամ, պանրինը՝ 600-700 դրամ, մսինը՝ 900 դրամ, երթուղայինի ուղեվարձը՝ 50 դրամ, էլեկտրաէներգիայի 1 կվտժամը՝ 10 դրամ: Հավելենք 1 կգ-ը 160-220 դրամ արժեցած հացը, 250 դրամ գնահատված տոմսի մածուկը, 400-500 դրամի սահմաններում արեւածաղկի ձեթը, 200-220 դրամանոց շարավազը, այսօրվա համեմատ այլուրի ու մակարոնի, հատիկաընդեղենների ու բանջարեղենի գները, որոնք հիմա դժվար է պատկերացնել: Այ թե կարդեինք մեր ներկայիս թող որ 25-30 հզ. դրամ կենսաթոշակով, առավել եւս 90-100 հզ. դրամ կազմող աշխատավարձով: Վստահ եմ՝ ոչ միտինգների կգնայինք, ոչ նստացույցի կմասնակցեինք, արտերկիր էլ միայն հանգստանալու կմեկնեինք: Բայց, ինչպես ասում են, շաբաթը ուրբաթից շուտ եկավ. մեր տնտեսության պատասխանատուները բարեբախտաբար մի փոքր ուշ պատկերացրին, որ շուկայական հարաբերություններ ասելիս հարկավոր է հիմնականում ամենաթողություն հասկանալ, գնային սանձարձակություն ու գազանային ախորժակ:

Զրի գինը 5 դրամով նվազեցնելը, գազի արդեն իսկ բարձր գինը հերթական տարում անփոփոխ թողնելը դրական գործընթաց ներկայացնելը հայաստանցիների մեջ որեւէ ոգեւորության դրսեւորման չի արժանանում, քանզի բարձրանում են նրանց առավել անհրաժեշտ այլ ապրանքների ու ծառայությունների գները, շարժական ու անշարժ գույքը, դրանց սպասարկումների ծախսերը:

Փորձենք Հայաստանի բնակչության տնտեսական վիճակը, կապված գնողունակության համարժեքության ցուցանիշի հետ, պատկերացնել Ավստրիայի Գրաց քաղաքի սուպերմարկետների գների օգնությամբ: Օրեր առաջ ներկայացրել էինք «բրոս» կոչվող հացի 1 կգ-ի 69 ցենտ գինը: Ընդունենք, որ այն ընտրված երկրներից մեկում դիտարկված միջինացված գին է, ՀՀ արժույթով մոտ 370 դրամ: Այս ապրանքի հայաստանյան խոստացված արժեքը ստանալու համար, քանզի ծրագրված է PPP-ն անփոփոխ տեսնել 2002-2015 թվականներին, հարկ է 370 դրամը բաժանել 3,38-ի, որի արդյունքում ունենում ենք 110 դրամ, երբ ունենք 350-450 դրամ հացի գին: Մի այլ առիթով ներկայացրել էինք «Մոցարելա» պանիրի գինը Գրացի առեւտրային ցանցում՝ 4,4 եվրո: Հայտնի գործակիցը կիրառելու պարագայում ստանում ենք Հայաստանում պանիրի ակնկալելի 620 դրամ գին, որը իրականում տատանվում է 2500-3000 դրամի սահմաններում, նշված պանիրի դեպքում 10-ապատիկ ավելին է:

PPP-ի Հայաստանի ջատագովներն անշուշտ կարող են այլ ծառայությունների ու ոլորտների թվերի օգնությամբ իրենց հիմնավորումները ներկայացնել, ուր ՀՀ-ի համեմատ իրոք բարձր գներ են: Ասենք, քաղաքային տրանսպորտով երթեւեկի արժեքը, երբ կարող ես մեկժամյա հատվածում թե տրամվայից, թե ավտոբուսից օգտվել, 1,9 եվրո է: Իրոք, մեր չափանիշով բարձր գումար է, բայց ավստրիացիները երբեւէ չեն դժգոհում, որովհետեւ գերազանց սպասարկում առաջարկող, վայրկյանի ճշտությամբ աշխատող այս փոխադրամիջոցներով շատ քիչ են երթեւեկում, երթեւեկողներն էլ հիմնականում մշտական տոմսերով են, ասենք, տարվա համար վճարում են 340 եվրո, իրենց տարեկան ստացածի 1- 2 տոկոսը: Դպրոցականներն ու միջին մասնագիտական ուսուցումների սովորողները տուն-դպրոց-քոլեջ ճանապարհը ավտոբուս-տրամվայով անցնելու դիմաց տարեկան մշտականի համար վճարում են սիմվոլիկ 7,6 եվրո. արտոնություններ են սահմանված մինչեւ 24 տարեկան չաշխատող ուսանողների համար: Կամ. էլեկտրիկի 1 ժամվա այցը տնային ցանցի ինչ-որ անսարքություն վերացնելու նպատակով 100 եւ ավելի եվրո արժե: Հավատացեք, վճարման ներկա եմ եղել: Բայց խնդրում եմ վերհիշել, թե վերջին 10 տարում երբ եք բարձր որակավորված, բազմատեսակ տեխնիկայով զինված էլեկտրիկ մասնագետի կարիք զգացել: Թանկ է տախի ծառայությունը, քանզի հազվադեպ կհանդիպեք 1 ավտոմեքենա ունեցող ավստրիական ընտանիք: Այնպես որ, որոշակի բարձր գները խոչընդոտ չեն ավստրիաբնակների համար հանգիստ ու բավարարված կենցաղով ապրելու առումով:

Փոխարենը հայաստանցին հիմնականում դժգոհում ու բողոքում է, քանզի ապրում է իր վաստակածի ու ստացածի համեմատ էապես թանկ երկրում, որը, ցավոք, իր իսկ տնտեսվարական միտքը փորձում է սխալ գնողունակության համարժեքության ցուցանիշ որակվող տնտեսագիտական շղարշով:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
Ավստրիա, Գրաց

«2015-ը սոսկ Դարդանելի կռիվների 100-ամյակը չէ, այլեւ հայերի տեղահանության 100-րդ տարելիցը»

Հայտարարում է Լաչինները՝ հավասարության նշան դնելով պատերազմում զոհված թուրք զինվորի եւ թուրքական բանակի զոհը դարձած արեւմտահայության միջեւ

Առաջին համաշխարհային պատերազմում օսմանյան Թուրքիայի համար առանձնահատուկ են Դարդանելի կռիվները: Դրանք նույնպես տեղի են ունեցել չարաբաստիկ 1915-ին, երբ փետրվարի 19-ին անգլիական ռազմածովային ուժերը փորձեցին ճեղքել նեղուցի ամրությունները, իսկ ապրիլի 25-ին անգլո-ֆրանսիական զորքերը դեսանտ իջեցրին Գելիբոլու, բայց ապարդյուն:

Թեեւ գերմանացի մարշալ ֆոն Սանդերսի հրամանատարության տակ Դարդանելում թուրքական զորամիավորումներին հաջողվեց կասեցնել Անտանտի առաջխաղացումը, սակայն տասնյակհազարավոր զոհերի գնով: Ընդ որում, այդ զոհերն անտեղի էին, որովհետեւ 1918-ի հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարից հետո օսմանյան Թուրքիան հանձնվեց հաղթողների ողորմածությանը, ու Անտանտը առանց որեւէ դիմադրության Դարդանելի հետ օկուպացրեց նաեւ Ստամբուլը:

Խնդիրն, իհարկե, Դարդանելի կռիվներում թուրքական բանակի զոհերը չեն, այլ Չանակալեի նահանգապետ Գյունգոր Ազիմ Թունայի, քաղաքապետ Ուլգյուր Գյոքհանի եւ քաղաքի համալսարանի ռեկտոր, պրոֆ. Սեդաթ Լաչինների մասնակցությամբ նահանգապետարանում կազմակերպված հանդիպումը: Հունիսի 15-ին հրավիրած այս հանդիպումը թուրքական մամուլի, մասնավորապես «Յուրիեթի» վկայությամբ՝ Չանակալեի համալսարանին օժանդակելու նպատակ է հետապնդել, որտեղ ելույթ է ունեցել ռեկտոր Լաչինները:

Նա ասել է, որ 2015-ին կլրանա Դարդանելի կռիվների 100-ամյակը, դա պետք է նշանավորվի ոչ միայն Չանակալեի, այլեւ ամբողջ Թուրքիայի մասշտաբով եւ դառնա համազգային նպատակակետ: Խոսքը հավանաբար հանդիսությունների մասին է:

Երբ լրագրողներից մեկը հիշեցրել է, որ 2015-ը ոչ միայն Դարդանելի կռիվների 100-ամյակն է, այլեւ «հայերի ցեղասպանության պնդումների» 100-րդ տարելիցն է, Լաչինները նշել է. «Հիրավի, Դարդանելի պատերազմների 100-ամյակը հանդիսացող 2015-ը միաժամանակ հայերի տեղահանության 100-րդ տարելիցն է: 2015-ը այդ առումով կարող է հայերի հետ հաշտեցման տարեթիվը հանդիսանալ: Հայերը լրջորեն պատրաստվում են տարելիցին: Արդյոք 2015-ի մարտի 25-ին Հայաստանի նախագահը կգա՞ Դարդանել եւ Գելիբոլու թերակղզում մեխակ կդնի՞ նահատակների շիրմին: Դրան ի պատասխան՝ Երեւան կգա՞ մեր նախագահը կամ վարչապետը՝ ծաղիկ դնելու համար ցեղասպանության հուշարձանին, եւ կկարողանա՞ ասել. «Թեեւ մենք կատարվածին «ցեղասպանություն» չենք ասում, սակայն գիտենք, թե ինչ բան է վիշտը, որովհետեւ դա նույնությամբ ապրել ենք նաեւ ինքներս: Մենք կիսում ենք ձեր վիշտը»: Այսինքն, 2015-ը կդառնա՞ հայկական հարցում որոշ բաներ անցյալում թողնելու, գրկախառնվելու եւ հաշտվելու տարի: Պատասխանը չգիտեմ, բայց դա իմ երազանքն է: Կարծում եմ, Դարդանելն այս առումով հրաշալի մթնոլորտ է ստեղծելու, բարոյահոգեբանական մթնոլորտ: Այսինքն, եթե մեզ հաջողվի հայերին ընդգրկել այս մթնոլորտում, կնշանակի՝ հրաշալի գործ արած կլինենք, որովհետեւ գիտենք, որ Դարդանելում մարտնչել են նաեւ թուրքահայ զինվորներ, նրանցից շատերը նույնպես նահատակվեցին: Թշնամու ռազմանավերի մի մասը խորտակել են այս հայ զինվորները: Այդ առումով հարցը ողջագուրվելու տրամաբանությամբ կարելի է փոխադրել քաղաքայինից համազգային, իսկ համազգայինից էլ՝ միջազգային հարթություն: Հրաշալի առիթ է եւ հնարավորություն: Հուսանք, որ մենք այս հնարավորությունը ճիշտ կօգտագործենք Թուրքիայում»:

Չանակալեի համալսարանի ռեկտոր, պրոֆ. Լաչինների ասածները մեկնաբանության կարիք չեն զգում: Պարզապես նա մոռանում է, որ Դարդանելում բանակը կռվել է բանակի դեմ, եւ թուրք զինվորը սպանվել է այդ կռիվներում, իսկ հայերի ցեղասպանության պարագայում իրավիճակը բոլորովին այլ է: Դարդանելում Անտանտի դեմ մարտնչող թուրքական բանակը, այնուհետեւ «Թեշֆիլաթը Մահուսայի» գլխավորությամբ, պետական այլ կառույցների եւ ընչաքաղց ժողովրդական զանգվածների հետ խոշտանգել ու տանջամահ են արել անզեն հայ բնակչությանը:

Այլ կերպ՝ օսմանյան բանակը, սկսած շարային ծառայողից, վերջացրած հրամանատարներով, զինվորի համազգեստ կրող արյունարբու մարդասպաններ են: Հավասարության նշան դնել ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինվորների եւ թուրքական բանակի ցեղասպան նկրտումների հետեւանքով բնաջնջված հայ ժողովրդի միջեւ, առավել եւս՝ դրանում ներգրավել Հայաստանի նախագահին, կնշանակի՝ անարգել ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, իսկ անարգանքով Մեծ եղեռնի հուշարձանին ծաղիկներ չեն դնում, որքան էլ դա երազի Լաչինները:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օբաման փորձեց հիմնավորել Լիբիայի պատերազմը

Ռմբակոծումները լիարժեք պատերազմ չե՞ն

Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը Կոնգրեսին զեկուցագիր է ուղարկել Լիբիայում ռազմական գործողության իրականացման վերաբերյալ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ 30-էջանոց փաստաթղթում պնդվում է, թե նախագահը պատերազմը վարում է օրինական հիմունքներով եւ կարող է դա շարունակել առանց օրենսդիրների հավանությունն ստանալու:

Իբրեւ իրենց դիրքորոշման հիմնավորում, զեկուցագրի հեղինակները ընդգծում են, որ ՆԱՏՕ-ի գործողության մեջ ԱՄՆ-ը խաղում է սահմանափակ, օժանդակ դեր եւ որ Լիբիայի տարածքում չկան ամերիկացի զինվորներ:

Բացի դրանից, Օբամայի օգնականները պնդում են, որ իրենք չեն անտեսել Կոնգրեսի կարծիքը եւ որ Լիբիայի հարցին նվիրված 40 հանդիպում են անցկացրել կոնգրեսականների ու նրանց օգնականների հետ:

Ֆրանսպրեսը իր հերթին հաղորդում է, որ Կոնգրես ուղարկված զեկուցագրում բերվում են տվյալներ Լիբիայի պատերազմի ծախսերի վերաբերյալ: Դրանց համաձայն, Լիբիայում հուզումներն սկսվելուց ի վեր ԱՄՆ-ը այդ երկրում ռազմական եւ մարդասիրական նպատակներով արդեն ծախսել է մոտ 716 մլն դոլար:

Ավելի վաղ՝ հունիսի 3-ին Ներկայացուցիչների պալատը ընդունել էր բանաձեւ, որով Օբամային պարտավորեցնում էր երկշաբաթյա ժամկետում մի շարք տվյալներ հայտնել Լիբիայի ռազմական գործողության վերաբերյալ: Մասնավորապես նախագահից պահանջվում էր հայտնել պատերազմի նպատակներն ու գինը, ինչպես նաեւ պատմել Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմների վրա Լիբիայի դեպքերի ազդեցության մասին:

Հունիսի 15-ին հայտնի դարձավ, որ Ներկայացուցիչների պալատի 10 անդամներ (հանրապետականներ եւ դեմոկրատներ) դատական հայց են հարուցել Բարաք Օբամայի դեմ: Հայցվորները պահանջում էին խոստովանել, որ Լիբիայի առնչությամբ նախագահի ընդունած որոշումներն անօրինական են:

Լիբիայի ռմբակոծումները դատապարտող կոնգրեսականները վկայակոչում են ռազմական լիազորությունների բաշխմանը վերաբերող 1973 թ. բանաձեւը: Դրա համաձայն, ԱՄՆ նախագահն իրավունք ունի արտերկրում ռազմական գործողություններ իրականացնել 60 օրից ոչ ավելի: Առավել երկարատեւ ռազմական գործողությունների համար անհրաժեշտ է ստանալ Կոնգրեսի թույլտվությունը:

60-օրյա ժամկետը Լիբիայում լրացել է մայիսի 20-ին: Սպիտակ տանը պնդում են, թե Լիբիայի ռմբակոծումները չի կարելի համարել լիարժեք պատերազմ, որին մասնակցելու համար կպահանջվեր Կոնգրեսի թույլտվությունը:

Երեւանում սիրիական համայնք. «Ո՞ւր է ազատ աշխարհի խիղճը»

Սիրիայում վերջին ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունների եւ դրանց վերաբերյալ միջազգային հանրության ունեցած դիրքորոշման կապակցությամբ երեկ «Երեւանի սիրիական համայնք» կազմակերպությունը հայտարարությամբ հանդես եկավ: Դիմելով միջազգային հանրությանը՝ կազմակերպությունը հռետորական հարց է հղում՝ «Ո՞ւր է ազատ աշխարհի խիղճը», այնուհետեւ մասնավորապես նշում է. «Ամեն մեկը, որ ձգտում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում կամ այլուր Սիրիայի դեմ միջոցառումներ ձեռնարկել, դրանով քաջալերում է ծայրահեղական, կրոնական, ահաբեկչական խմբավորումներին՝ ելնելով անձնական հաշիվներից եւ Սիրիայի հետ հաշվեհարդար տեսնելու հանգամանքից, այլ ոչ թե սիրիացի ժողովրդի հանդեպ ուշադրությունից: Ակնկալում ենք, որ այս ազատ աշխարհի կառավարությունները կտեսնեն իրականությունը եւ կդադարեն կեղծել Սիրիայում կատարվող դեպքերի իրական պատկերը եւ կդադարեն նաեւ մեղադրել Սիրիայի կառավարությանը՝ իր ժողովրդի հանդեպ բռնություն կիրառելու մեջ, քանի որ սիրիական կառավարությունը ոչ մի բռնություն չի կիրառում սեփական ժողովրդի հանդեպ: Ակնկալում ենք, որ ազատ աշխարհը կգիտակցի այս իրողությունը, աչք չի փակի դրանց վրա, եւ սիրիացիների արյունը չի օգտագործվի որպես միջոց իր ծրագրերը իրագործելու համար»:

Հ. Ա.

«Ալ Ղաիդայի» նոր առաջնորդն է Այման ալ Զաուահիրին

«Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի սպանված առաջնորդ Ուսամա բեն Լադենի իրավահաջորդը նրա նախկին տեղակալ Այման ալ Զաուահիրին է: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ եգիպտոսցի ալ Զաուահիրիի նշանակման մասին հայտարարել են իրենք՝ ահաբեկիչները:

Ամերիկացիները բեն Լադենին սպանեցին մայիսի լույս 2-ի գիշերը Պակիստանի Աբբոթաբադ քաղաքում: Նախքան այդ մի քանի տարի նրան հաջողվել էր թաքնվել:

Թեեւ ալ Զաուահիրին չունի բեն Լադենի ազդեցությունն ու հեղինակությունը, շատերը կանխատեսում էին, որ հենց նա կդառնա «Ալ Ղաիդայի» նոր առաջնորդը: Ահաբեկիչների նախկին կողմնակից Նոման Բենոմանի տեղեկությունների համաձայն, բեն Լադենի սպանությունից հետո նրա պաշտոնակատար էր նշանակվել եգիպտոսցի Սեյֆ ալ Ադելը՝ նրա նախկին թիկնապահը:

Իրազեկիչ Բենոմանի խոսքերով, ալ Ադելի նշանակումը ժամանակավոր էր, եւ ղեկավարությունը շուտով պետք է անցներ ալ Զաուահիրիին:

Ի դեպ, սաուդյան «Ալ Ոհաթան» թերթը գրում է, որ ալ Զաուահիրին թերեւս մեղսակից է իր ղեկավարի ոչնչացմանը: Թերթի կարծիքով, դրա պատճառը բեն Լադենի եւ ցանցի եգիպտական թեւի տարաձայնություններն էին: Հաղորդվում է, որ բեն Լադենի ոչնչացման ծրագրին մասնակցել է նաեւ Սեյֆ ալ Ադելը: Ծրագրի նպատակն էր ամերիկացիներին ուղղորդել դեպի այն տունը, որտեղ բնակվում էր «թիվ 1 ահաբեկիչը»:

«Ալ Ղաիդայի» ստեղծումից առաջ Այման ալ Զաուահիրին գլխավորում էր «Իսլամական ջիհադ» եգիպտական խմբավորումը: Նա ՀԴԲ հետախուզման մեջ գտնվող հանցագործների թվում է, թեեւ տեղ չի զբաղեցնում առաջին տասնյակում: ՀԴԲ տվյալներով, ալ Զաուահիրին մեղսակից է 1998-ին Տանզանիայում եւ Քենիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումների կազմակերպմանը, որոնց հետեւանքով 200 մարդ սպանվեց:

ԱՄՆ-ը 25 մլն դոլար պարգեւավճար է խոստացել Այման ալ Զաուահիրիի գտնվելու վայրը հայտնողներին:

Արգենտինան արգելեց հասարակական վայրերում ծխելը

Արգենտինայի նախագահ Քրիստինա Ֆեռնանդես դե Կիրշները ստորագրել է օրենք, որի համաձայն երկրի հասարակական վայրերում ծխելու արգելք է սահմանվում: Այդ մասին հաղորդում է EFE գործակալությունը:

Օրենքը ծխելն արգելում է նաեւ աշխատատեղերում: Բացօթյա վայրերից արգելքը չի վերաբերում միայն բակերին, սանդղավանդներին եւ մասնավոր շենքերի պատշգամբներին:

Փաստաթուղթը նաեւ արգելում է ծխախոտ գովազդել եւ խստացնում է գլանակների վաճառքի պայմանները: Telam գործակալության տվյալներով, այսուհետեւ արգելվում է հատով գլանակներ վաճառել կամ կազմակերպել դրանց վաճառքը ավտոմատներից: Բացի դրանից, կտրականապես արգելվում է ծխախոտ վաճառել 18 տարին չլրացած անձանց:

Օրենքը ծխախոտ արտադրողներին պարտավորեցնում է տուփերի վրա անել հատուկ մակագրություններ եւ պատկերներ, որոնք կնախազգուշացնեն ծխելու կործանարար հետեւանքների մասին: Սիգարետների անվանումներում արգելվում է օգտագործել «թեթեւ» եւ «փափուկ» բառերը:

Երկրի Կոնգրեսում ավելի վաղ՝ հունիսի 1-ին կայացած քվեարկության ժամանակ օրենքի օգտին քվեարկել էր 181 պատգամավոր, 1-ը դեմ էր արտահայտվել, 1-ը ձեռնպահ էր մնացել, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Օրենքի կիրարկումը մեկնաբանելիս նախագահ Կիրշները պատմել է, որ ինքը անցյալում օրական երկու տուփ սիգարետ էր ծխում, ամուսինը՝ Նեստոր Կիրշները (2003-ից Արգենտինայի նախագահն էր), չորս տուփ, բայց երկուսն էլ վաղուց թողել են ծխելը:

Ֆրանսպրեսի տվյալներով, ծխողները կազմում են Արգենտինայի բնակչության 33 տոկոսը:

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

Դավիթ Սարգսյանին հեռացնելն ունի՞ քաղաքական ենթատեքստ

Ի պատշտպանություն Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի, գրադարանի աշխատակիցներն ու ընթերցողները «ակցիա» են սկսել: Հիշեցնենք, որ 2 շաբաթ առաջ մշակույթի նախարարը գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանին փոխանցել է ծանուցագիր, որի համաձայն՝ տնօրենի ծառայության ժամկետը լրացել է, ու պայմանագիրն էլ ենթակա չէ երկարացման: Երեկ «Արմաս» ակումբում փոխգնդապետ **Ռաֆիկ Թադևոսյանը**, որը նաեւ ներկայացավ որպես Ազգային գրադարանի 40 տարվա ընթերցող, նշեց. «Վստահ չեմ, որ Դավիթ Սարգսյանին հաջորդող տնօրենը բանաձախող չի լինի»: Ռաֆիկ Թադեւոսյանը գովաբանեց ներկայիս տնօրենին ու հայտարարեց, որ նրան աշխատանքից հեռացնելը սխալ քայլ է: Տնօրենի կողմնակիցները դիմումբողոքներ են ուղարկել հանրապետության նախագահին, վարչապետին ու ԱԺ նախագահին եւ, բնականաբար, դրանցում հանդես են եկել ընդդեմ Հասմիկ Պողոսյանի որոշման: Ի դեպ, երեկվա ասուլիսին նաեւ պետք է ներկա լիներ Ազգային գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանը, սակայն չէր եկել: Ռաֆիկ Թադեւոսյանը տեղեկացրեց, որ փոխտնօրենն առավոտյան ժամը 10.00-ին գնացել է մշակույթի նախարարություն. հավանաբար չի հասցրել գալ ասուլիսին: Թե ի՞նչ արդյունքի կհասնեն Դավիթ Սարգսյանի կողմնակիցները, ցույց կտա ժամանակը: Նրա կողմնակիցները շարունակ նշում են տնօրենի կատարած բարի գործերի մասին, բայց եւ կան կարծիքներ, որ Դավիթ Սարգսյանը չարաշահել է իր պաշտոնական դիրքը: Սրան «**Ազգը**» արդեն անդրադարձել է հունիսի 15-ի համարում: Իսկ Դավիթ Սարգսյանի կողմնակիցներն ունե՞ն տվյալներ, թե ո՞վ է հաջորդելու ներկայիս տնօրենին, եւ նրան պաշտոնից հեռացնելն արդյոք ունի՞ քաղաքական ենթատեքստ: Անդրադառնալով այս հարցերին՝ Ռաֆիկ Թադեւոսյանը նշեց. «Չեմ բացառում, որ այս ամենն ունի քաղաքական ենթատեքստ. մեր երկրում ամեն ինչ հնարավոր է: Նաեւ չեմ բացառում, որ տնօրենի պաշտոնի համար մշակույթի նախարարն արդեն թեկնածու ունի, բայց դեռ տեղյակ չեմ՝ ով է լինելու»:

Ի. Պ.

Մինասի որմնանկարների շուրջը բանավեճը թեժանում է

«**Ազգը**» էլեկտրոնային փոստով ստացավ Գյումրիի քաղաքապետարանի մամուլի քարտուղարության հայտարարությունը՝ Մինաս Ավետիսյանի որմնանկարների ճակատագրի եւ դրանք փրկելու վերաբերյալ վերջին շրջանում մամուլում քննարկվող իրարամերժ հայտարարություններին: Ինչպես նշված է հայտարարությունում, «որմնանկարների փրկության վերաբերյալ իր տագնապների մասին Գյումրիի քաղաքապետարանն ու քաղաքապետը շարունակել են հայտնել 2010 եւ 2011 թվականներին՝ ՀՀ մշակույթի նախարարությանն ուղղվող գրություններով...»: Ըստ դրանց, համայնքի 2011 թ. բյուջեով նախատեսվում է անհրաժեշտ ֆինանսավորում Մ. Ավետիսյանի որմնանկարները ոչնչացումից փրկելու եւ դրանք քաղաքի նշանակալից հասարակական շենքերում տեղադրելու համար: Գյումրիի ավագանին նույնպես պատրաստակամություն է հայտնել համայնքի բյուջեից տրամադրել գումար՝ որմնանկարների փրկության նպատակով: Հաշվի առնելով, որ Գյումրիում չկան համապատասխան վերականգնող մասնագետներ, խնդրել են մշակույթի նախարարությանը աջակցել այդ հարցում:

Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանը հանդիպել է Մինասի որդու՝ Արման Ավետիսյանի հետ, քննարկել այդ հարցը: «Սակայն դրական արձագանքներից հետո մեզ համար անսպասելիորեն հետեւեց կառավարության հայտնի որոշումը՝ որմնանկարները «Արմենիա» օդանավակայան տեղափոխելու մասին»:

Գյումրիի քաղաքապետարանը հայտարարում է. «Այսօր էլ պատրաստ ենք անհրաժեշտ միջոցներ տրամադրել որմնանկարների վերականգնման նպատակով, միայն թե դրանք չպոկեն իրենց արմատից՝ Գյումրիից, որտեղ ծնվել ու աճել են»:

Մ. Մ.

Արձագանքում են սփյուռքից

Խմբագրությանը շարունակում են էլեկտրոնային նամակներ հղել ոչ միայն Հայաստանից, այլեւ արտերկրից, որոնք վերաբերվում են գրադարանների տնօրենների հետ նոր աշխատանքային պայմանագրեր չկնքելու մշակույթի նախարարի որոշմանը: Վերջին նամակը խմբագրությանն ու մշակույթի նախարարին էր ուղարկել կոմպոզիտոր, խմբավար, երգահան, ուսուցիչ, արձակագիր Յակոբ Մանուկյանը Տորոնտոյից (Կանադա): Պրն Մանուկյանը իր խորին շնորհակալությունն ու գնահատանքն է հայտնում երաժշտագիտական գրադարանի տնօրինուհի Գուլո Նահատակյանին իր տարիներ շարունակ անձնվեր ու կարեւոր դերակատարման համար: Կոմպոզիտորը նշում է, որ իր առաջին երաժշտական գործը (1980 թ.), որի օրինակը հեղինակը չուներ, խնամքով պահվել է Երեւանի երաժշտագիտական գրադարանում եւ տկն Գուլո Նահատակյանի ջանքերի շնորհիվ հավաքվել ու խմբավորվել են շատ արժեքավոր նյութեր: Հարգարժան Յակոբ Մանուկյանը խնդրում է նախարարին վերանայել որոշումը եւ նկատի առնել սփյուռքի շատ երաժիշտների կարծիքը, տկն Նահատակյանի գիտելիքներն ու կարողությունը գործադրել ի նպաստ հայ երաժշտության ու նրա գանձարանի:

Մ. Մ.

Հայ երիտասարդ դիզայներները լավագույնն էին Ֆլորենցիայում

Ամեն տարի իտալացի բիզնեսմեն Ռոմալդո Դելբիալդոյի նախաձեռնությամբ Ֆլորենցիա քաղաքում կազմակերպվում է դասընթաց, տարբեր երկրների աղագա դիզայներների ու ճարտարապետների մասնակցությամբ: Դելբիալդոն Իտալիայում հայտնի է որպես հյուրանոցային ցանցերի սեփականատեր:

Այս տարի կայացած դասընթացին մասնակցել են Հայաստանի, Ուկրաինայի եւ Իտալիայի ուսանողները: Հայկական կողմից Ֆլորենցիա են ուղեւորվել ԵՊՃՀՀ-ի դիզայնի նորաստեղծ ֆակուլտետի 18 ուսանող եւ ֆակուլտետի դեկան Լեւոն Թոքմաջյանը: 6-օրյա միջոցառման նպատակն էր փորձի, գիտելիքների եւ մասնագիտական հմտությունների փոխանակումը: Դասընթացի ընթացքում աղագա դիզայներները բաժանվել են խմբերի՝ քննարկելու եւ առաջարկություններ ներկայացնելու խիտ բնակեցված քաղաքներում ձեղնահարկերի խնդրի ու զարգացած քաղաքներում գովազդային կոմունիկացիաների հարցի վերաբերյալ: Դասընթացի արդյունքում ԵՊՃՀՀ-ի ուսանողական կազմը հայտարարվել է հաղթող՝ արժանանալով պատվոգրերի:

Հ. Հ.

40 տարի առանց Պարույր Սեւակի

Ճիշտ 40 տարի առաջ, հունիսի 17-ին եղեռնական մահով իր մահկանացուն կնքեց հայ պոեզիայի փայլուն դեմքերից մեկը՝ Պարույր Սեւակը: Սակայն այդ չորս տասնամյակում երբեւէ Պարույր Սեւակը չմոռացվեց: Տպագրվեցին նրա բանաստեղծությունների ժողովածուները, ստեղծագործությունների հավաքական գիրքը եւ այլն: Ուշագրավ է, որ գրեթե բոլոր միջոցառումներում հնչում են սեւակյան տողերը, որոնցից շատերը դարձել են նաեւ թեւավոր խոսքեր:

Ինչպես «**Ազգը**» տեղեկացավ ՀԳ միության նախագահ Լեւոն Անանյանից, այսօր Գրողների միությունը Արարատի մարզպետարանի հետ անցկացնում է մի շարք միջոցառումներ Պարույր Սեւակի մահվան 40-րդ տարելիցի առիթով: Վաղ առավոտյան Գրողների միության պատվիրակությունը, ավանդույթը չխախտելով, ծաղկեպսակներ կտեղադրի Սեւակավանի ճամփին, վթարի վայրում կանգնեցված հուշաքարին, կխնկարկի նրա անմահ հիշատակը եւ մեկ րոպե լռությամբ ներկաները կմտաբերեն Սեւակի տողերից: Այնուհետեւ Ջանգակատուն (Ջանախչի) գյուղի Ղազարյանների տան բակում, ուր ծնողների հետ իր վերջին հանգվանն է գտել նաեւ Պարույր Սեւակը, հարգանքի տուրք կմատուցվի ու կխնկարկվի Սեւակի հոգու հանգստության համար:

Մեծ գրողի տարելիցին նվիրված հանդիսությունը կշարունակվի Պարույր Սեւակի տուն-թանգարանում: Բացման խոսքով՝ «Սեւակի այժմեականությունը իր մահից հետո» հանդես կգա Լեւոն Անանյանը, այնուհետեւ Սեւակ գրողին ու նրա գրական անցած ուղու մասին կխոսեն գրականագետ Դավիթ Գասպարյանը, թանգարանի տնօրեն Ավետիք Գրիգորյանը: Կցուցադրվի Սեւակի մասին պատմող փաստավավերագրական ֆիլմ: Սեւակին ձոնած իրենց բանաստեղծությունները կընթերցեն գրողներ եւ բանաստեղծներ Գառնիկ Մանուկյանը, Ներսես Աթաբեկյանը, Արեւշատ Ավագյանը, Լեւոն Բլբուլյանը, Հասմիկ Սիմոնյանը, Գագիկ Դավթյանը եւ ԱՄՆ-ից Ավիկ Դերմենջյանն ու դրամատուրգ Հրանտ Մարգարյանը: Սեւակի բանաստեղծությունների ընթերցմամբ հանդես կգա Սիլվա Յուզբաշյանը:

Միջոցառմանը կմասնակցեն հանրապետության մարզերի Գրողների միության մասնաճյուղերի ներկայացուցիչները, գրողներ, մտավորականներ, հյուրեր արտերկրից, նաեւ Սեւակի պոեզիայի սիրահարներ: Նախատեսվում է Ջանգակատան շրջակայքում բարձրախոսով հնչեցնել Պարույր Սեւակի ընթերցումները:

Տարիները գլորվում են, սակայն Սեւակը միշտ մնում է սիրված թե՛ տարեցների եւ թե՛ երիտասարդների շրջանում: Իսկ նրա տողերը դարձել են կենդանի աորում եւ ուղեցույց ամենքին:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱԲՅԱՆ

Իրանահայ նկարիչ Սմբատի մասին ԱԼՄԱ-ում

Հայաստանի Ամերիկյան համալսարանի հիմնադիրներից, համալսարանի ճարտարագիտության բաժնի երկարամյա դեկան եւ Բերքլիի «Կալիֆոռնիա» համալսարանի պրոֆեսոր, դոկտ. Արմեն Տեր-Կյուրեղյանը, մայիսի 25-ին ելույթ ունենալով Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանում (ԱԼՄԱ-ում), ներկայացրել է իր հեղինակած «Սմբատի կյանքն ու ստեղծագործությունները» շքեղ ալբոմը, որը նվիրված է իր հորը՝ իրանահայ նկարիչ Սմբատ Տեր-Կյուրեղյանին, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեթեյթըր» շաբաթաթերթի մայիսի 21-ի համարը:

Սմբատ Տեր-Կյուրեղյանը (1913-1999) 20-րդ դարի ամենահայտնի իրանահայ նկարիչն է: Հիմնականում նկարել է ջրաներկով եւ գուաշով: Հետնորդը լինելով 17-րդ դարից Նոր Ջուղայում հաստատված իր նախնիների, նա իր մեջ կրել է իր ժողովրդի եւ բնակավայրի գեղարվեստական ավանդույթները եւ վարպետորեն կտավներին փոխանցել իրանական եւ հայկական գյուղական վայրերի հրաշալի տեսարաններն ու բնապատկերները: Դրանցով նա մի տեսակ կամրջել է Արեւելքն ու Արեւմուտքը, եվրոպական թափանցիկ ջրանկարչության ոճային առանձնահատկությունները ներմուծելով Իրան եւ իրանական կենցաղի ու ավանդույթների ինքնատիպությունը ներկայացնելով արեւմտյան հասարակությանը: Իր կյանքի վերջին 19 տարիները Սմբատն անցկացրել է Գլենդեյլում (Կալիֆոռնիա):

Իր բարձրորակ ալբոմում որդին՝ դոկտ. Արմեն Տեր-Կյուրեղյանը բացի կենսագրական տվյալներից, ընդգրկել է նաեւ մտերմիկ հիշողություններ, նամակներ, նկարներ, այլ հեղինակներից մեջբերումներ, ինչպես նաեւ ավելի քան 180 գունավոր վերարտադրություններ Սմբատի կտավների, գծանկարների եւ էսքիզների:

Հ. Ծ.

Բակուր Կարապետյանին հանձնեցին մեդալ



Հայաստանի գրողների միությունում երեկ տեղի ունեցավ հրապարակախոս, արձակագիր, լրագրող եւ գեղանկարիչ Բակուրի (Բորիս Ավանեսի Կարապետյան) 70-ամյա հոբելյանական ցերեկույթը, որի շրջանակում ցուցադրվեցին նրա գեղանկարչական աշխատանքները եւ տեղի ունեցավ նրա «Նեռը իմ մեջ» եւ «Արցախյան գոյամարտի համահավաք» գրքերի շնորհանդեսը: «Նեռը իմ մեջ» վեպը հրատարակվել է պետության աջակցությամբ եւ այստեղ ներկայացվում է այսօրվա մեր կյանքը՝ իր բազմակողմանի դրսեւորումներով: Հեղինակը հաճախ դիմում է գրոտեսկային, այլաբանական ձեւերի, որոնք օգնում են ընթերցողներին ճիշտ ու հետաքրքիր ընկալել նյութը:

«Արցախյան գոյամարտի համահավաք» գիրքը ընթերցողների առջեւ բացահայտում է Արցախյան ազատագրական շարժման եւ Ադրբեջան-Արցախ պատերազմի նոր դրվագներ եւ իրողություններ: Մասնաբարը՝ որպես մեր ժողովրդի պատմության կարեւոր ժամանակահատվածի վավերագրություն՝ հարուստ նյութ է պարունակում: Բակուրը հեղինակել է նաեւ բազմաթիվ վիպակներ, էսսեներ, փաստա-վավերագրական պատմավեպեր:

Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը ՀԳՄ կողմից Բակուրին հանձնեց մեդալ՝ գրական վաստակի համար: Անանյանը ողջունելով հոբելյարին, ասաց. «Բակուրը մեծ առաքելություն է կատարում պատերազմի մասնակից ազատամարտիկների վկայությունները ամբողջացնելով «Արցախյան գոյամարտի համահավաք» գրքում: Նա մեր ժամանակակից արձակի բնագավառում իր ասելիքն է բերում»:

Հոբելյանական ցերեկույթին ներկա էին նաեւ ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը, Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը եւ բազմաթիվ արվեստագետներ, որոնք իրենց շնորհավորական խոսքերով ողջունեցին հոբելյարին:

«**Ազգ**»-ը եւս շնորհավորում է Բակուրին 70-ամյա հոբելյանի կապակցությամբ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Արդյունավետ մեկնարկ

28 շախմատիստներ հուշամրցաշարը սկսեցին հաղթանակով

Երեկ Ջերմուկում մեկնարկեց շախմատի Կարեն Ասրյանի 4-րդ հուշամրցաշարը, որին մասնակցելու հայտ են ներկայացրել 71 շախմատիստներ: Մեկնարկային տուրում հուշամրցաշարի մասնակիցները աչքի ընկան արդյունավետ խաղով: Կայացած 35 պարտիաներից 28-ը ավարտվեց մրցակիցների հաղթանակով:

Մասնակիցների մեջ ամենաբարձր վարկանիշ ունեցող Արման Փաշիկյանը մրցաշարը սկսեց հաղթանակով՝ պարտության մատնելով Արթուր Ղարագյոզյանին: Հաջող էր Սամվել Տեր-Սահակյանի մեկնարկը, որն առավելության հասավ մրցաշարի անվանի վետերան, միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանի նկատմամբ:

Մրցաշարի մյուս վետերանը՝ Ռաշիդ Աբրահամյանն այս տուրում խաղից ազատ էր: Հանրապետության գործող չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը հաշտություն կնքեց Դինարա Սադվակասովայի հետ: ԱՄՆ-ում բնակվող եւ վերջերս գրոսմայստերի կոչում ստացած Տաթեւ Աբրահամյանն իր օգտին առաջին հաղթական միավորը գրանցեց

ՖՈՏՈԼՈՒՐ

Հայկ Մարտիրոսյանի հետ մրցավեճում: Կանանցից հաղթանակ տոնեցին նաեւ Մարիա Կուրսովան եւ Նինո Բացիաշվիլին, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Արման Պետրոսյանին եւ Ռոբերտ Հակոբյանին: Տուրը հաջող էր նաեւ օլիմպիական չեմպիոն Արտաշես Մինասյանի համար, որը հաղթեց Գյոզալ Հակիմիֆարդին:

Մրցաշարի մասնակիցներից 2-րդ ամենաբարձր վարկանիշն ունեցող գրոսմայստեր Մաֆսիմ Տուրովը հաշտություն կնքեց Դավիթ Կարաթորոսյանի հետ: Կոնստանտին Շանավան հաղթեց Տիգրան Հարությունյանին, Միխայիլ Ուլիբինն էլ առավելության հասավ Ամիր Կովսարինիայի նկատմամբ:

«Բոստոն Բրյուինզը» Սթենլիի վեցակի գավաթակիր

Ամերիկյան «Բոստոն Բրյուինզ» թիմը վերջին 39 տարվա մեջ առաջին անգամ նվաճեց հոկեյի ազգային լիգայի Սթենլիի գավաթը: «Վանկուվեր Քենախսի» հետ եզրափակիչ վճռորոշ՝ 7-րդ մրցախաղում հյուրընկալվելիս հաղթելով 4-0 հաշվով, ամերիկացի հոկեյիստները 4-3 հաշվով շահեցին մրցամարտը: Այսպիսով, արդեն 18 տարի կանադական թիմերին չի հաջողվում նվաճել Սթենլիի գավաթը:

«Բոստոն Բրյուինզի» հոկեյիստները դարձան Սթենլիի վեցակի գավաթակիրներ: Վերջին անգամ թիմը պատվավոր մրցանակը նվաճել էր 1972-ին: Իսկ առաջին հաջողությանը թիմը հասել է 1929-ին: Դրանից հետո «Բոստոն Բրյուինզը» հաղթող է ճանաչվել 1939-ին, 1941-ին եւ 1970-ին:

Վճռորոշ խաղում իրեն հիանալի դրսեւորեց «Բոստոն Բրյուինզի» դարպասապահ Թիմ Թոմասը, որը ճանաչվեց եզրափակիչ փուլի լավագույն հոկեյիստ:

«Վանկուվեր Քենախսի» երկրպագուները շատ ծանր տարան սեփական հարկի տակ սիրելի թիմի պարտությունը՝ անկարգություններ հրահրելով Վանկուվերի փողոցներում: Նրանք ջարդուփշուր արեցին իրենց ճանապարհին հանդիպած ամեն ինչ՝ օգտագործելով հոկեյի մականներ ու ճայթռուկներ: Արդյունքում, խաղի ավարտից մեկ ժամ հետո 2010-ի օլիմպիական խաղերի մայրաքաղաքի փողոցներում կարելի էր հանդիպել վառվող ավտոմեքենաների, խանութների ջարդված ցուցափեղկերի: Ոստիկանությունը մեծ դժվարությամբ կարողացավ հանդարտեցնել կրքերը՝ ֆանատների դեմ օգտագործելով մահակներն ու արցունքաբեր գազը:

Նշենք, որ Կանադայում սա առաջին դեպքը չէր: 1994-ին, երբ «Վանկուվեր Քենախսին» վճռորոշ խաղում պարտվեց «Նյու Յորք Ռեյնջերսին», Վանկուվերի փողոցներում կրկին անկարգություններ տեղի ունեցան, որի արդյունքում տուժեց 200 մարդ:

Վիկտոր Պիցուրկեի 3-րդ փորձը

Վիկտոր Պիցուրկեն մարզչական իր կարիերայում 3-րդ անգամ գլխավորեց ֆուտբոլի Ռումինիայի ազգային հավաքականը: Նրա գլխավոր խնդիրն է հավաքականի հետ նվաճել Եվրո-2016-ի եզրափակիչ փուլի ուղեգիր: Սակայն Եվրոպայի 2012-ի առաջնության ընտրական մրցաշարում էլ նա կփորձի հաջողության հասնել:

Վիկտոր Պիցուրկեն մինչեւ 2015-ը պայմանագիր է կնքել Ռումինիայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: 55-ամյա մասնագետը նշել է, որ թեեւ հավաքականը ներկայումս դժվարին ժամանակներ է ապրում, սակայն ինքը որոշեց ռիսկի դիմել ու գլխավորել հավաքականը:

Վիկտոր Պիցուրկեն հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում փոխարինեց Ռազվան Լուչեսկուին, որը Ռումինիայի ընտրանին գլխավորում էր 2009-ից: Հունիսի սկզբին կայացած ընտրական հերթական մրցախաղում ռումինացիները 0-3 հաշվով պարտվել էին Բոսնիայի հավաքականին, որից հետո Լուչեսկուն պաշտոնանկ էր արվել: Նա կգլխավորի Բուխարեստի «Ռապիդը»:

Պիցուրկեն նախկինում հավաքականը գլխավորել է Եվրոպայի 2000-ի եւ 2008-ի ընտրական մրցաշարերում:

«Ինչպես տեսնում եք, վերադարձել եմ: Թեեւ Ռումինիայի հավաքականն ընտրական D խմբում ընթանում է 3-րդ տեղում եւ 5 միավորով հետ է մնում առաջատարից, սակայն մի մտածեք, թե ինձ չի հետաքրքրում հավաքականի ճակատագիրը Եվրո-2012-ում: Մեր առջեւ շատ ծանր խնդիր է դրված, սակայն ցանկանում եմ, որ Ռումինիայի հավաքականը հանդես գա ինչպես 2012-ի, այնպես էլ 2016-ի Եվրոպայի առաջնություններում», հայտարարել է Պիցուրկեն հավաքականի ղեկը ստանձնելուց հետո: Հիշեցնենք, որ ընտրական հաջորդ հանդիպումը ռումինացիներն անցկացնելու են սեպտեմբերի 2-ին Լյուքսեմբուրգում, իսկ չորս օր անց հյուրընկալելու են ֆրանսիացիներին:

Հենդերսոնը 16 մլն-ի դիմաց տեղափոխվեց «Լիվերպուլ»

Անգլիական «Սանդերլենդի» կիսապաշտպան Ջորդան Հենդերսոնը հնգամյա պայմանագիր է կնքել «Լիվերպուլի» հետ: Նրա համար «Լիվերպուլը» 16 մլն ֆունտ ստեռլինգ է վճարել: 20-ամյա ֆուտբոլիստի այս տրանսֆերը Անգլիայում կլինի նոր մրցաշրջանի ամենաթանկարժեք տեղափոխություններից մեկը:

Երիտասարդ ֆուտբոլիստը հայտարել է հանդես գալ տարիքային բոլոր խմբերի հավաքականներում: Պատանեկան եւ երիտասարդական հավաքականներում անցկացրած 8 խաղերում նա 10 գոլ է խփել: Իսկ արդեն 2010-ի նոյեմբերի 17-ին Հենդերսոնը նորամուծ նշեց Անգլիայի ազգային հավաքականում՝ դաշտի կենտրոնական հատվածում ընկերակցելով Սթիվեն Ջերարդին:

Հավասարակշռությունը կրկին չխախտվեց

Պրահայում կայացավ Սերգեյ Մովսիսյանի եւ Դավիթ Նավարայի շախմատային մրցախաղի 3-րդ պարտիան: Ինչպես եւ նախորդ երկուսը, 3-րդ պարտիան էլ ավարտվեց ոչ-ոքի: Սպիտակներով խաղում էր Սերգեյ Մովսիսյանը: Այսպիսով, մրցախաղում առայժմ հաշիվը հավասար է՝ 1,5-1,5: Մրցակիցները դասական շախմատի եւս երեք պարտիա կանցկացնեն, որից հետո ուժերը կչափեն 4 պարտիայից բաղկացած արագ շախմատի մրցախաղում:

ՖՈՒՏԲՈԼ

Վարդան Մինասյանը հավաքականի նոր թեկնածուներ է որոնում

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մտադիր է հունիսի 24-ին Սոչիում ներկա գտնվել ՌԴ առաջնության «Ժեմչուժինա»-«Շիննիկ» հանդիպմանը, որպեսզի հետեւի «Շիննիկի» 24-ամյա հարձակվող Արթուր Սարկիսովի խաղին: Վերջինիս խաղը նա ցանկանում էր դիտել հունիսի 14-ին կայացած «Շիննիկ»-«Ուրալ» հանդիպման ժամանակ, սակայն Սարկիսովը որակազրկված էր ու մրցախաղին չմասնակցեց:

Հիշեցնենք, որ օգոստոսի 10-ին Հայաստանի ազգային հավաքականը Կաունասում ընկերական հանդիպում է անցկացնելու Լիտվայի ընտրանու հետ: Այդ խաղում մեր հավաքականի գլխավոր մարզիչը ցանկանում է փորձարկել նոր ֆուտբոլիստների, որպեսզի կողմնորոշվի նրանց հարցում եւ դրական արդյունքի դեպքում այդ խաղացողներին օգտագործի ընտրական մրցախաղերում: Արդեն հայտնի է, որ Լիտվայի հավաքականի հետ հանդիպմանը հրավիրվելու է Ամստերդամի «Այաքսի» հարձակվող Արազ Օզբիլիսը, որը վերջապես համաձայնել է կրել Հայաստանի հավաքականի մարզաշապիկը: Ճիշտ է, նա առայժմ ցանկանում է ծանոթանալ մեր հավաքականում տիրող մթնոլորտին, ֆուտբոլիստներին, հետո նոր վերջնական որոշում կայացնել: Մյուս կողմից էլ Վարդան Մինասյանին դեռ պետք է գոհացնի Օզբիլիսի խաղը, որպեսզի մարզիչը հավանություն տա նրան ընդգրկելու մեր ընտրանում: Ամեն դեպքում Լիտվայի հավաքականի հետ կայանալիք ընկերական մրցախաղը մեր մարզիչների համար վերջին լավ հնարավորությունն է փորձարկելու նոր ֆուտբոլիստների ինչպես արտերկրից, այնպես էլ հայկական ակումբներից:

Դարպասները մնացին անառիկ

Մինչեւ 16 տարեկանների Հայաստանի պատանեկան հավաքականը Հանրավանում ընկերական խաղում ուժերը չափեց Վրաստանի իր հասակակիցների հետ: Երկու թիմերն էլ ունեցան դարպասները գրավելու հարմար առիթներ, սակայն այդպես էլ գոլ չգրանցվեց: Հանդիպմանը ներկա էին ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը, Հայաստանի ազգային հավաքականի եւ «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն ու նրա օգնական Արթուր Մկրտչյանը, մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականների գլխավոր մարզիչ Սուրեն Չախալյանը:

Այսօր Հանրավանում մրցակիցները 2-րդ անգամ կչափեն ուժերը: Խաղը կսկսվի ժամը 12-ին:

Հաջողության հասավ միայն Լիլիթ Գալոյանը

Վորոնեժում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրն անհաջող էր առաջատարների խմբում գտնվող Գեւորգ Հարությունյանի համար, որն անդրանիկ պարտությունը կրեց: Նա սեւերով զիջեց Անդրեյ Դեյսակինին: Հայաստանցի շախմատիստներից միայն Լիլիթ Գալոյանին հաջողվեց հաղթանակ տոնել: Լիլիթը սպիտակներով առավելության հասավ Իվան Դենիսովի նկատմամբ ու վաստակելով 2,5 միավոր, զգալիորեն բարելավեց մրցաշարային վիճակը:

Նախորդ տուրում անդրանիկ պարտությունը կրած Զավեն Անդրեասյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց Անատոլի Պոլիվանովի հետ: Իսկ ահա Նելլի Աղինյանը կրկին պարտվեց՝ սպիտակներով զիջելով Դմիտրի Ջուպրիկովին:

Ռուսաստանցի հայերից 4-րդ տուրում հաջողությունն ուղեկցեց Էդուարդ Բարսամյանին, որը սեւերով հաղթեց Գեորգի Սակվաձեին: Արթուր Գաբրիելյանը հաշտություն կնքեց Նիկոլայ Եֆանովի հետ, իսկ Գեւորգ Հայրապետյանը միավորը բաժանեց Բոգդան Բելյակովի հետ մրցավեճում:

4 տուրից հետո միանգամից 5 շախմատիստներ՝ Ալեքսեյ Ալեքսանդրովը, Եվգենի Շաղոշնիկովը, Կոնստանտին Թառլեւը, Դմիտրի Կոկարեւն ու Անդրեյ Դեյսակինը 3,5-ական միավորով գլխավորում են աղյուսակը: Թառլեւն ու Շաղոշնիկովը միավորը կիսեցին միմյանց հետ անցկացրած պարտիայում: Ալեքսանդրովը հաղթեց Լեոնիդ Գոլովինին, իսկ Կոկորեւը պարտության մատնեց Սուրի Վայբհավին: 12 շախմատիստներ, որոնց թվում է Արթուր Գաբրիելյանը, 3-ական միավորով հետաքնդում են առաջատարներին: Հայաստանցի շախմատիստներից Զավեն Անդրեասյանը, Գեւորգ Հարությունյանն ու Լիլիթ Գալոյանն ունեն 2,5-ական միավոր: Նելլի Աղինյանը վաստակել է 1,5 միավոր:

Միեր Հովհաննիսյանը հաղթողին զիջեց մեկ միավորով

Հոլանդիայի Լիմբուրգ քաղաքում անցկացված շախմատի միջազգային մրցաշարում Հայաստանը ներկայացրեց միջազգային վարպետ Միեր Հովհաննիսյանը: Նա 98 մասնակիցների մեջ իր վարկանիշով (2472) 11-րդն էր: Ամենաբարձր վարկանիշն ուներ ուկրաինացի գրոսմայստեր Սերգեյ Ֆեդորչուկը (2654): Եվս երկու շախմատիստ՝ Մաֆսիմ Տուրովը (2634) եւ Էմանուել Բերգը (2608) 2600-ից բարձր վարկանիշ ունեին:

4 օրում մրցաշարի մասնակիցները շվեյցարական մրցակարգով 7 տուր անցկացրին: Միեր Հովհաննիսյանը 7 հնարավորից վաստակելով 5 միավոր, հոլանդացիներ Սվինկելսի, Բեզեմերի ու Դամբախերի, ինչպես նաեւ բելգիացի Վանդեվորտի հետ բաժանեց 6-10րդ տեղերը:

Հայ շախմատիստը հաջող սկսեց մրցաշարը՝ տոնելով երկու անընդմեջ հաղթանակ Զաղ Վոգելի եւ Յասպեր Բրուկմեուլենի նկատմամբ: 3-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Սերգեյ Ֆեդորչուկի հետ, իսկ հաջորդ պարտիայում պարտություն կրեց Անդրեյ Շչեկալովից: Դա մրցաշարում Միերի միակ պարտությունն էր: Հաջորդ 3 տուրերում հայ շախմատիստը նախ ոչ-ոքի խաղաց Ջոս Օֆրինգայի հետ, ապա հաղթեց Միխայել Գունինին եւ Նիկ Բիջլմային:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց բրազիլացի Ալեքսանդր Ֆիեռը, որը 7 հնարավորից վաստակեց 6 միավոր: 5,5-ական միավորով 2-5-րդ տեղերը բաժանեցին Ֆրանսիան ներկայացնող Անդրեյ Շչեկալովը, հոլանդացիներ Բենջամին Բոկն ու Ստեֆան Էռնստը եւ ռուսաստանցի Մաֆսիմ Տուրովը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքով

Միշտ էլ ելք կգտնվի

Երեւի հինգերորդ թե վեցերորդ դասարանում էի, երբ Ստեփանակերտի թիվ երեք դպրոցի պատմության ուսուցիչ Իլյա Միխայլիդին (ազգությամբ հույն, հայտնի Իլյա Իվանովիչը) դասն սկսեց՝ մեջբերում կատարելով «Պրավդա» թերթից: Այդ դասը հիշողությանս մեջ մնաց ողջ կյանքում կարծում եմ այն պատճառով, որ բարձրահասակ, գեղեցիկ, փարթամ մազերով ուսուցիչը, որը սիրում էր երեխաներին եւ իր առարկան, մի տեսակ հանդիսավոր նախազգուշացրեց մեզ, որ ինչ-որ անսովոր եւ շատ կարեւոր բան է կատարվել ողջ մարդկության պատմության մեջ: «Ահա եւ ինքը՝ «Պրավդա»-ն է գրում», այդպես ամրագրեց նա իր ասելիքը, որը հանգում էր նրան, թե հիմա արդեն երբեք համաշխարհային պատերազմներ չեն լինի: Իսկ իմ սերունդը շատ լավ գիտեր ու հասկանում էր, թե ինչ է համաշխարհային պատերազմը: Ես տասը տարեկան էի, երբ պատերազմն ավարտվեց: Եվ մենք գիտեինք, որ փոսատարը մեր փոքրիկ քաղաքի համարյա բոլոր տներ է տարել «սեւ թուղթ», եւ լսում էինք բարձր լացը միայնակի տներից, որոնց պատուհանները փողոցին էին նայում:

Եվ, իհարկե, ինչպե՞ս կարող էինք չուրախանալ, երբ մեծի, այն էլ սիրելի ուսուցչի հանդիսավոր հայտարարությունն էինք լսել, թե այլեւս պատերազմ չի լինի: Իսկ «Պրավդա»-ն, պարզվում է, գրել էր, թե Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ ստեղծվեց Խորհրդային Միությունը: Երկրորդ համաշխարհայինից հետո սոցիալիստական երկրներ դարձան Չինաստանը, Արեւելյան Եվրոպայի, Հարավարեւելյան Ասիայի կղզային եւ մայրցամաքային երկրները, իսկ ահա ողջ Աֆրիկան դադարեց գաղութացված լինել եւ աշխարհի քաղաքական քարտեզի վրա ավելացրեց իր վառվռուն գույները: Բայց դա դեռ ամենը չէ: Երրորդ համաշխարհային պատերազմի հետեւանքն այն կլինի, որ ողջ երկրագունդը կդառնա կոմունիստական: Իսկ ես բոլորովին էլ պատահաբար չհիշեցի սիրելի ուսուցչիս լավատեսական ելույթը:

«Արմենիա»-ն մոտենում է Սուրաբայա քաղաքին: Նավային արխիվից հանեցի համապատասխան թղթապանակը: Ինդոնեզիայի մասին նյութը սկսվում է նրանից, որ Հարավարեւելյան Ասիայի Մալայան արշիպելագի կղզիների եւ Նոր Գվինեա կղզու արեւմտյան մասի վրա տեղադրված պետությունը մինչեւ 1945 թվականը կոչվում էր Հոլանդական Օստ-Ինդիա: Հիշում եմ, 50-ական թվականների վերջերին հայտնի գրքերից էր Ինդոնեզիայի նախագահ Սուկառնոյի գիրքը: Այն վերնագրված էր «Սարինա»: Այդպես էին կոչում Սուկառնոյի դայակին: Ընթերցվում էր շատ մեծ հետաքրքրությամբ: Այն եւ՛ ազգագրական ստեղծագործություն էր, եւ՛ հեղափոխական էսսե, եւ՛ քաղաքատարկյալի ու պետական գործչի գրառումներ: Իսկ նրա այցելությունը ԽՍՀՄ Նիկիտա Սերգեեւիչ Խրուշչովի օրոք ինդոնեզիական նախագահին դարձրեց ամենահայտնի քաղաքական գործիչներից մեկը: Նա դարձավ միջազգային Լենինյան մրցանակի դափնեկիր: Շնորհիվ «Սարինա» գրքի ԽՍՀՄ-ում այն ժամանակ շատերն էին համակրում այդ առաջնորդին, որն իր երկրում կառավարեց քսաներկու տարի: Եվ հանկարծ ճարճատյունով ցած նետեցին՝ հայտարարելով ժողովրդի թշնամի, ինչպես ընդունված էր անել: Փոխվեց երկրի քաղաքական կառուցվածքը համարյա բոլոր երկու տասնյակ հազար կղզիներում: Եվ միլիարդավոր ռուբլիներ, որ ծախսվել էին այսպես ասած՝ դեմոկրատական Ինդոնեզիայի զարգացման վրա, կորան գրողի ծոցը: Շուտով նույնը կատարվեց Եգիպտոսում, երբ գահընկեց արեցին Գամալ Աբդել Նասերին, որին արդեն ոչ թե միլիարդներ, այլ տրիլիոններ էին տվել (հենց միայն Ասուանի ջրամբարը ինչ ասես արժեր), եւ դեռ Խորհրդային Միության հերոսի կոչումն էլ վարդիր: Ի դեպ, նույնը կատարվեց եւ աֆրիկյան այլ երկրների առաջնորդների հետ: Եվ ամեն անգամ բանն ավարտվում էր նրանով, որ մեր գլխին նորանոր թշնամիներ էինք ստեղծում: Ինքներս էլ ողջ երկրում երիկի ու գուլպաների համար հերթ էինք կանգնում: Իսկ այդ ժամանակ չորս հոգեգարներ՝ Բրեժնեւի ղեկավարությամբ, անտեսելով զինված ուժերի գլխավոր շտաբի կարծիքը, ինքնակործան պատերազմ սկսեցին Աֆղանստանում: Եվ մենք գիտենք, թե դա ինչով ավարտվեց: Հիրավի, ճիշտ էր անմոռանալի գեներալ Ալեխանդր Լեբեդը, երբ իր հիանալի գիրքը վերնագրեց այնքան ճշգրիտ՝ «Տերությունն էր ափսոս»:

Չի կարելի ասել, թե Սուկառնոյից հետո գործերն ավելի լավ գնացին: Շուտով քաղաքացիական պատերազմ սկսվեց, որը տեւեց ավելի քան երեսուն տարի:

Ինդոնեզիան աշխարհում տասնհինգերորդն է իր տարածքով եւ չորրորդը՝ բնակչության թվաքանակով (230 միլիոն): Մահմեդական բնակչության թվով աշխարհի ամենամեծ երկիրն է: Հայերն այստեղ հայտվել են 17-րդ դարում: Ճավա կղզում այն ժամանակ ապրել են մեր երկու հազար հայրենակիցներ՝ մեծամասնությունը Նախիջեւանից: Ակտիվիստներից շատերի անունները նշված են «Ստյուռֆ» հանրագիտարանում: Հետագայում նրանց թիվը հասավ տասը հազարի: Բայց վերադառնանք այն հարցին, թե ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո եւ մանավանդ 50-ական, 60-ական թվականներին Ասիայի եւ Աֆրիկայի գաղութացված ու կիսագաղութացված տարածքներում նոր պետություններ ծնվեցին: Դրանց բացարձակ մեծամասնությունը կազմավորվեց ազգային-ազատագրական պայքարի արդյունքում: Իրադրությունն առանձնապես յուրահատուկ էր ողջ Հարավարեւելյան Ասիայի ահռելի տարածքներում, որտեղ պատերազմի տարիներին զավթված էին Ճապոնիայի կողմից: Եվ դրանցից շատերում վաղուց գոյություն ունեին լիարժեք հայկական համայնքներ՝ իրենց եկեղեցիներով, դպրոցներով: Բացի Ինդոնեզիայում, Մյանմայում (Բիրմա), Թաիլանդում, Սինգապուրում վերաբնակված հայերից, կար նաեւ Հնդկաստանը, որտեղ երկար դարերի ընթացքում պահպանվեց հայկական գաղութը, եւ որը հիմնականում գրվեց 20-րդ դարի երկրորդ կեսին: Այնպես որ, ներկայումս այդ եւ բազմաթիվ այլ երկրներ, ներառյալ աֆրիկյան աշխարհամասում, մեզ հարգուրում են այս կամ այն գաղութի բուն պատմությամբ եւ, իհարկե, պահպանված ու նույնիսկ չպահպանված հայկական հուշարձաններով:

Ահա թե ինչու, իմանալով, որ ինդոնեզական Սուրաբայա քաղաքում այնուամենայնիվ պահպանվել է հայկական եկեղեցին, մենք որոշեցինք անել ամեն հնարավորն ու անհնարինը՝ այն անպայման գտնելու եւ տեսանկարահանելու համար: Իսկ գուցե, ինչպես նախապես առաջարկում է Արմեն Նազարյանը, քանի որ եկեղեցին այժմ ծառայում է այլ դավանանքի, հնարավոր լինի պայմանավորվել եւ շինության վրա հուշատախտակ ամրացնել, որում կնշվի եկեղեցու հայկական ծագումը: Հիանալի գաղափար է: Սակայն մինչեւ Ինդոնեզիա դեռ ահռելի տարածություն ունենք անցնելու: Բացի դրանից՝ Ավստրալիայի վերջին կետում «Արմենիա»-ն պետք է տեխնիկական ստուգում անցնի՝ դեպի տուն բերող երկարատեւ անցումից առաջ:

Իսկ հիմա կանգնած ենք մի մեծ խնդրի առջեւ: Չէ՞ որ ոչ միայն չգիտենք, թե երկրամիլիոնանոց Սուրաբայայում որտեղ է գտնվում եկեղեցին, այլեւ տղաներն էլ մուտքի վիզաներ չունեն: Այնպես որ, խնդիրը պետք է լուծել նախքան «Արմենիա»-ն կմտնի այդ նավահանգստի ծովախորը: Դա նշանակում է՝ մինչ նավը «կախտորոշվի» եւ կմոտենա Ինդոնեզիային, ինձ հարկավոր է ամեն գնով հայտնվել Ջակարտայում: Այլ ելք չկա: Բայց մենք լավ գիտենք՝ երբ ոչ մի ելք չկա, ապա պարզապես այն գտնել է հարկավոր:

Զորի ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Հնդկական օվկիանոս

Վաճառվում է

Daewoo Matiz Best
մակնիշի ավտոմեքենա
2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
Հեռ.՝ (094) 577-578

Վաճառվում է LADA Priora մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:
Հեռ.՝ (094) 401-337

ՀԱՅԱՏՔ

Ձվերը՝ տարբեր զամբյուղներում

1-ին էջից

Բայց այդպիսի հավակնություն ունի ոչ միայն նա: Այդպիսի հավակնություն ունի առնվազն չորս մարդ, ահա եւ այդպիսի հրապարակումը կարող էր ցանկանալ այդ 4-ից կամ նրանց կողմնակիցներից որեւէ մեկը: Մենք չենք ասում կամ չենք ստուգել, որ ասենք՝ ԱԺ նախագահի ունեցվածքի վերաբերյալ բերված փաստերը իրականությանը համապատասխանո՞ւմ են, թե ոչ, քավ լիցի: Մենք խոսում ենք այն մասին, թե որքան կանխատեսելի ու սխեմավորված է քաղաքական դաշտը, որը գիտակցված կամ ակամա իր արացությունն է գտնում մամուլում: Էլի նույն թերթում, էլի բազմաթիվ քաղաքական կողմերի կամ անհատների ստի ցանկության հանգույն, խոսվում է ՀՀԿ-ի համամասնական՝ լրիվ երիտասարդներից կազմված ցուցակի, երիտասարդներ-ավագներ հակադրության մասին: Էլի քավ լիցի, մենք բոլորովին բարձրացված հարցերի իսկությանը չենք կասկածում ու համաձայն ենք հատկապես, որ ուզած կառույցում պետք է թարմացում ու սերնդափոխություն լինի, ու ՀՀԿ-ի վերաբերյալ հենց ինքներս ենք առաջիններից մեկն այդ մասին բարձրաձայնել: Սակայն այս պահին ընդհանրապես խոսքը համակարգվող մոտեցումների մասին է՝ էլի բացենք սեփական եզրահանգման գալու ընթերցողի դաշտը. վերը նշված արտածումները մամուլում ոչ միայն օրվա ընդդիմության, այլեւ շատ իշխանական թեւերի ուրոշ են, նույն համակարգի ներսում արեւի տակ տեղի համար համակարգի միավորների պայքարի արացությունք. ՀՀԿ-ի պառակտումը շատերի երազանքն է:

Վերադառնալով Մադրիդյան սկզբունքների 2007 թվականի տարբերակի հրապարակմանը, որն, անշուշտ, ինչ-որ փոփոխություններ կրել է (այլապես մի քանի տարի ի՞նչն էին համաձայնեցնում բանակցություններում, ու մենք չգիտենք՝ այժմ ինչ տեսք ունեն ի վերջո փաստաթղթի վիճելի կետերը), նկատենք, որ սա եւս մեր կարծիքով Կազան գնացող նախագահի այցից առաջ փորձ է՝ բողոքի ալիք բարձրացնելու հասարակության մեջ, այդպե՞ս բան հասկացնելու միջազգային հանրությանը, կողմերին, Մինսկի խմբին, թե այ միջնորդներ, այ միջազգային հանրություն, հասարակությունը դեմ է այդ սկզբունքներից առանցքայիններին: Ու այդպիսի հրապարակումը նախ իշխանությանն է ձեռք տալիս, իսկ մնացյալը, թե «Ղարաբաղը ծախում են, տարածքները հանձնում են»՝ ֆուֆու բան է, քանի որ նախագահ Սարգսյանը տարածք հանձնողը չէ, ու լավ էլ գիտե 1997-ին այդպես արտահայտված նախագահի հետագա ճակատագիրը: Մեր ասածն այն է, որ ՀԱԿ-ին հարող թերթում այս պահին այդ սկզբունքների հայտնվելը (ինչը սակայն բազմիցս կիսաս-պրաս բացահայտվել է) մեր կարծիքով ապացուցում է մեր ասած՝ քաղաքական դաշտի կառավարելիության մասին: Իսկ միամիտներին եւ նյարդայիններին կխնդրեինք իրենց զարմանքը պահել անտեղյակների համար:

Հիմա այս բոլորում մեզ հետաքրքրում է ոչ թե բլեֆը, այլ այն, թե ի՞նչն է մեծ հավով օգտակար Հայաստան-պետության, լայն իմաստով՝ հայ ժողովրդի համար, իսկ ավելի առարկայական՝ ուզում ենք ցույց տալ, որ անկախ հարող ուժերից եւ նրանց շրջապատից, գոնե երեք նախագահների առումով երկխոսությունը չգիտենք, բայց զրույց միշտ էլ կարող է լինել, գոնե Ղարաբաղի հարցի հետ կապված: Դե իսկ նախագահ Սարգսյանի աշխատակազմի ղեկավարը որ ասում էր՝ երկխոսությունը վաղուց է սկսվել, բոլորովին էլ խաղ չէր, տարբեր ճամբարների մեր աղբյուրներից ստույգ տեղեկություններ ունենք այդպիսի երկխոսության վերաբերյալ՝ իշխանական եւ ընդդիմադիր գործիչների ոչ պաշտոնական հանդիպումներ եւ բանակցություններ, շատ հարցերի վերաբերյալ քայլերի համաձայնեցումներ: Արդյոք դա չի՞ խոսում այն մասին, որ Կ. Կարապետյանի ասած վաղուց սկսած երկխոսությունն իրականություն է, ուղղակի կողմերը, իրենց աջակցող շերտերի մոտ չեն կարող բացել խաղաթղթերը: Իսկ բանակցությունների եւ հանդիպումների վերաբերյալ վկայություններ ստացվում են շատ աղբյուրներից, այդ հանդիպումները կայանում են ընդհանուր ընկերների առանձնատներում, անգամ՝ լրատվամիջոցներում, անգամ, պատկերացրեք, Սասուն Միքայելյանն էլ գիտե, որ մինչեւ այս շաբաթվա վերջ Սերժ Սարգսյանի հրապարակային տեսակետը իբր հայտնի կլինի երկխոսության վերաբերյալ:

Մի քանի այլ ցուցիչներ եւս կան մեր վերն ասածների վերաբերյալ. որ ՀՀՇ-ի առանցք կազմող մարդիկ հեռանում են այդ կուսակցությունից, սա առաջին հայացքից միայն կարող է թվալ ՀԱԿ-ի առաջնորդի հաղթանակ՝ իր հետ անհամաձայն մարդկանց նկատմամբ, իրականում հեղինակություն ունեցող անձանց հեռացումը պետք է գցեր ՀԱԿ-ի վարկանիշը: Բայց էլ ավելի իրականն այն է, որ համակարգում որոշվել է ձվերը նույն զամբյուղը չդնել, քանի որ իշխանության փոքրիկ ռեսուրսների հավակնորդները շատ են, իսկ այդ ախորժակները պետք է զսպել երեւութապես նոր, իրականում՝ ոչ այնքան նոր միավորներ ստեղծելով (ի դեպ, այդ նոր միավորները համալրողներից շատերը կարող են դա չիմանալ եւ նոր կառույցները համալրել ազնիվ նպատակներով): Որ մի կողմից ասում են՝ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը նախագահ Սարգսյանի պրոյեկտն է, ու մյուս կողմից էլ թե՝ այդպես ուզում են անվանարկել այդ նորը, մենք մեր կողմից ավելացնենք՝ կուսակցության փոխնախագահ Անուշ Սեդրակյանը Քոչարյանի օգնականը չէ՞ր. մի խոսքով՝ էդպես միանգամից չես իմանա, ո՞վ ում բարեկամն է, բայց որ բոլորը նույն համակարգն են ներկայացնում, սա՝ հաստատ:

Իսկ հիմա խաղը առայժմ կանգ է առել մինչեւ Կազան: Կազանում տեղի ունեցողի հանգույն եւ վերը գծված սխեմայում կարող է արագ եւ անկանոն շարժում սկսվել, եւ կարող է ուրվագծվել, թե շանս կա՞ սխեման փոխելու: «Դիսիժընն մեյքինգ» ասողները լավ գիտեն եւ սխեման, եւ նրանից դուրս գտնվող ուժերի հնարավորությունները: Մեր կարծիքով՝ մինչեւ Կազան Հայաստանի նախագահը չի կարող մանրել ժամանակը՝ ՀԱԿ-ի պատվիրակություն կազմելուն ու նրանց սպասումին անդադարառնալու, քանի որ ղարաբաղյան հարցի հետ կապված իսկապես նոր զարգացումներ են նախանշվում: Ֆրանսիացի համանախագահ Ֆասիեն հո իզուր չէ՞ր ասել Եվրոհանձնաժողովի միջազգային հարաբերությունների կոմիտեում, որ եթե կողմերը համաձայնության չհասնեն, կնշանակի, որ այս՝ երրորդ հայեցակարգն էլ է ձախողվել: Իսկ ամերիկացի համանախագահը խոսում էր նաեւ Եվրոմիությունը ղարաբաղյան հարցում դերակատար դարձնելու մասին, ինչը փորձագետներին արդեն հեռուն գնացող եզրահանգումների են բերում, թե՝ սա փակուղի է, արդյոք պատերազմի կսանի՞ այս բոլորը, արդյոք Մինսկի խմբի ձեւաչափի կամ այլ փոփոխությո՞ւն են մատնանշում Եվրոհանձնաժողովում արված հայտարարությունները: Կամ՝ Ռուսաստանին, որը վերջին երկու տարում ԱՄՆ-ի եւ մյուսների թույլտվությամբ ակտիվացրել էր ջանքերը ղարաբաղյան կարգավորման հարցում, հիմա ասում են՝ եղբայր, քեզ տրված ժամանակը սպառվել է, հիմա մենք ենք ակտիվանում: Կամ՝ արդյոք դա կարո՞ղ է նշանակել Լեռնային Ղարաբաղի գործոնի ակտիվացում բանակցություններում՝ ընդհանուր եւրոպական ինտեգրման համատեքստում, եւ ի՞նչ կասի դրան Ռուսաստանը. Կազանում այս հարցադրումների պատասխանը, անկախ փաստաթուղթ ստորագրել-չստորագրելուց, գուցե սպանքի, իսկ դրանից հետո էլ գուցե գա ներքաղաքական հարցերի պատասխանը սպանելու ժամանակը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: